

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ն • ԱԴԱՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Հ - 12

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 6

ՊՐՕՖ. ԻԻ. ՎԱԳՆԵՐ

ԵՐԿԻՐ

ՊԱՏՄՈՒԱԾՔ
ՊՈ.ՑԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգմանեց
+ Վարդգես Աղանեան
○○○
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

087.1

Հ - 12

20 06 09

087.1

Կ-12

ՀՐԱՏՎԱԿՈՒԹԻՒՆ Ն. ԱՂԱՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 6

55
4-4

ՊՐՕՓ. Ի. ՎԱԳՆԵՐ

ԵՐԿԻՐ

Պատմուածք պատճենների համար

○○○○○○○


6 նկարով

○○○○○○○

Թարգմանեց
+ Վարդես Աղանեան

○○○○○○○○○○

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7.
1915



I. ԱԵՌԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԵԼՐ

Մի երեկոյ, յոգնած ձիաներով, մօտենում էի հիւսիսային կովկասի գերմանական գաղութներից մէկին. Իմ ետևս վերստերով տարածւում էր անապատ. Փոստի փոշոտ ճանապարհը, որով դանդաղութեամբ առաջ էր ընթանում իմ սայլակը, ինչպէս երկար գորշագոյն օձ, ոլոր-մոլոր պտոյտ էր գալիս անապատում. Նա ձգւում էր իմ ետեր շատ հեռուե անյայտանում այնտեղ, ուր երկինքը միանում էր երկրի հետ, իսկ առջեկից արդէն երեռում էին գաղութի տնակները իրանց պայծառ-կարմիր կղմինտրէ ծածկերով... և նրանց ետև բարձրանում էին հսկայական լեռներ. Մէկը միւսի վրայ դիզւում էին նըրանց ձիւնապատ գագաթները, կարծես թէ հորիզոնի վրայ անշարժ կախուած սպիտակաւուն ամպերի շղթայ լինէին. Նայում էի հեռուում կապոյտին տուող այդ լեռներին և նրանց խորհրդաւոր, կարծես կիսաթափանց գագաթները գրաւում էին ինձ դէպ իրանց:

Իմ աջ կողմը կամաց-կամաց մայր էր մտնում արևելք: Ինչպէս մի ահագին գունդ, նա խոնարհում



4840 - 2010

էր ուղղակի անապատի հարթ մակերեսյթի ետև։ Սայլակի ու ձիերի թողած երկար, ձիծաղելի ստուերները վագում էին մեզ հետ, երկարում էին, խառնուում միմեանց և անյայտանում երեկոյեան մթութեան մէջ։

Եւ ահա կրակէ գունդի վերջին ծայրը ծածկուեց երկրի ետև և լեռների ամբողջ ձիւնապատ շղթան լուսաւորուեց քնքոյց, ոսկէզօծ-վարդագոյն լուսով։ Երբ ահագին անապատը արդէն պատած էր երեկոյեան կիսախաւարով, արեի վերջին ճառագայթները գեռ ևս փայլվլում էին լեռների սպիտակ գագաթներին և սքանչելի կարմիր գոյն տալիս նրանց։

Մօտենալով գաղութին, ես մտածում էի, թէ ինչ ահագին տարբերութիւն կայ այս հեռաւոր լեռների, ուր ամեն քայլափոխում մի տեսարանին յաջորդում է միւսը, և այն լայն, ձանձրալի—միակերպ անապատային հարթավայրի մէջ, որ ես թողի իմ ետև։

Միւս օրը սենեակիս լուսամուտից նորից սկսեցի հրճուել լեռնաշղթայի տեսքով։ Բայց էլ էն սարերը չէին, ինչ որ երեկ երեկոյ։ Արեգակը պայծառ լուսաւորում էր նրանց սպիտակ կատարը, որ այժմ սուր կերպով աչքի էին ընկնում մուգ-կապոյտ երկնքում առաւօտուայ թարմ թափանցիկ օդի մէջ։ Սպիտակ կատարից ներքե պարզ կերպով դուրս էին ցցուած ժայռուտ լեռների գորշագոյն խմբերը, իսկ աւելի ցածր սեին էին տալիս անտառապատ զափիվայրերը։ Ի հարկէ լեռները չէին փոխուել։ Փոխուել

էր միայն նրանց լոյսը, և հետն էլ փոխուել էր նաև ընդհանուր տեսքը, որ այժմ բոլորովին ուրիշ բան էր, քան երեկ։

Լեռներն, ինչպէս ծովերը, շարունակ փոխում են իրանց տեսքը, և այս փոփոխութիւններից առաւել ևս բազմազան են դառնում նրանք։ Սակայն իրանք լեռներն էլ շարունակ փոփոխում են, թէպէտ և շատ դանդաղութեամբ։ Բնութեան մէջ ոչինչ չի մնում անփոփոխ։

Լեռները փոփոխում է նախ և առաջ ջուրը, գետերն ու այն բոլոր ջրերը, որոնք հոսում են նրանց զառիվայրերով։ Ջուրը հեղեղում է նրանց. տանում է նրանցից հող և այս հողով լցնում լեռնային հովիտները։ Ջրի հետ միասին լեռների փոփոխութեան վրայ աշխատում է և օդը։ Ջրի աշխատանքն ու օդի աշխատանքը յաճախ այնպէս համերաշխ են առաջ գնում, որ չի կարելի ասել, թէ ուր է մէկը վերջանում և ուր սկսում միւսը։ Օդը՝ Ջրի անձանձիր օգնականն է։ Նա միշտ օգնութեան է հասնում այստեղ, ուր միայն ջուրը չի կարողանում գործ տեսնել։ Օրինակ՝ պատահում է պինդ կարծր քար, որին միայն ջուրը չի կարող յաղթել, —իսկոյն օդը գործի է կպչում, քարը խոնաւ օդից փոխում է, և օդափոխում է»։ և սկսում է փիրուել։ Մէջը երեսում են ձեղքեր, ուր արդէն ջուրը կարողանում է թափանցել։ Երբ սառնամանիքի ժամանակ այդ ջուրը սառչում է ձեղքերում, ձեղքերն սկսում են լայնանալ։ Եթէ ջուրը սառցնենք պինդ խցուած շշի մէջ,

ջուրը սառելով կը տրաքացնի շիշը: Այդպէս էլ ջուրը
երբ սառում է, տրաքացնում է և պինդ քարը: Եւ
այսպէս, յամառ լեռնային քարաժայոր փոքրառփոքր
տեղի է տալիս ջրի և օդի համերաշխ ջանքերին:
Ինչքան էլ երբեմն անխորտակելի թուար նա, վեր-
ջիվերջոյ նրանից մնում է միայն իրար վրայ կի-
տուած սպիտակաւուն քարերի դէզ: Բայց այս քարերն
էլ երբեկցէ կանյայտանան, կը փշուեն աւելի մանր
կտորների, որոնց յետոյ կը ողողի և կը քշի ջուրը:

Այս փոփոխութիւնները կատարւում են շատ
դանդաղութեամբ, բայց ջուրը և օդը աշխատում են
շառանց հանգստանալու և առանց ժամանակ որոշե-
լուած: Լեռները քանդելով, նրանք ուղղում են երկրի
մակերևոյթը, և եթէ ոչինչ չխանդարէր նրանց աշ-
խատանքին, կամաց-կամաց ամբողջ ցամաքը կը փո-
խուէր միանման, սփոռցի պէս հարթ, դաշտավայրի:

II. Քարէտեղ

Բոլոր լեռները միակերպ հեշտութեամբ չեն
քանդւում ջրից: Ինչքան քարի մէջ շատ ճեղքեր կան
և ծակեր, որոնցով վերևից կարող է անձրկի ջուր
մտնել մէջը, ինչքան նա հեշտ է փոխւում օդի մէջ,
այնքան քայլայումը կատարւում է արագ: Այդպիսի
քարից բաղկացած լեռնալանջերը ծածկուած են լի-
նում մանր ու խոշոր սրածայր, ջրից չը յդկուած,
անկիւնաւոր քարերի կտորտանքով: Այսպիսի տեղե-
րը կոչւում են «քարէշեղ»:

Ես շատ քարէշեղեր եմ տեսել. պատահել է որ
նրանց վրայից սար եմ բարձրացել, զգուշութեամբ
որոնելով այնպիսի տեղեր, ուր կարելի լինէր ոտը
դնել, որպէսզի ներքե չգլորուիմ: Երբեմն դրանք
մանր քարեր են կամ խճ, որոնք սկզբում են ոտ-
ների տակից և իրանց հետ տանում նոյնիսկ ճանա-
պարհորդներին: Եթէ լեռնալանջը դիք է, մի պո-
կուած քարը մղում է հարիւրաւոր ուրիշ քարեր, և
այդ բազմաթիւ քարերը, կարծես կենդանի լինեն,
այնպէս են թոշկոտում և միմեանց առաջ հրելով՝
ձգտում ներքե ու գլորւում, մինչև որ կպատահեն
աւելի փոքր զառիվայրին: Երբեմն քարէշեղերի կր-
տորտանքը, ընդհակառակ, աւելի մեծ են լինում, և
այդ տեսակ շեղջերը շատ գեղեցիկ են: Այդպիսի
շեղջեր շատ կան Ղոկմում, և գուցէ նրանց մէջ ամե-
նագեղեցիկը «Քառու» կոչուածն է, որ իջնում է
մինչեւ ծովը Ափւդաղ սարին մօտիկ:

Ղոկմի լեռների կատարները իջնում են մինչեւ
ծով ուղղահայեաց ժայռերով: Երբ գնում ես հարա-
ւափնեայ խճուղիով, հրճուած ես այդ կարմրաւուն
կամ գորշ քարէ պատերով, որոնք պայծառ լուսա-
ւորուած են լինում արևի ճառագայթներով: Մի
կողմից գեղեցիկ զառիվայրեր, որոնց ծոպերը մըտ-
նում են երկնքի խորութեան մէջ, միւս կողմից եր-
կար զառիշեղ իջուածք դէպի ծով, ծածկուած անթիւ
պարտէզներով և այգեստաններով: Հէնց այստեղ են
թափւում այն քարերն ու հողակոշտերը, որոնց ջու-
րը պոկում է իրանց հարազատ ժայռերից: Նրանք

տեղ-տեղ կազմում են մի տեսակ քարեայ գետեր, որոնք ձգում են ժայռերից մինչև նոյնիսկ ծովափ, իսկ առանձին-առանձին խոշոր քարեր գլորւում են հենց ծովի մէջ և թափւում նրա յատակին:

Այն բոլոր քարերը, որոնցով քարում են Պետրովադի փողոցները, մի ժամանակ ֆինական լեռների մասն էին կազմում: Բնութիւնն ինքը կոտրտել է քարաժայռերը, ջարդել է մանր-մանր և պատրաստել մայթի համար: Ֆինական ժայռերը բաղկացած են շատ հասարակ քարից—հատաքարից (գրահանութեան): Հատաքարից են շինուած Պետրովադի հսահակեան տաճարի սիւներն ու սանդուխտները, նրանից է շինուած Նեայի գետեզրը, մայրաքաղաքի շատ շէնքերի հիմքերն ու ամրոցի պատերը: Պէտք է որ խիստ ամուր լինի այն քարը, որ գործ է ածուում այսպիսի շինութիւնների համար: Եւ ճշմարիտ, կարմիր հատաքարը աշքի է ընկնում իր պնդութեամբ, բայց նա էլ փոքրառփոքը փոխուում է օդի մէջ:

Կան և հատաքարի ուրիշ տեսակներ, որոնց մէջ օդը աւելի արագ է մանում. այդպիսի հատաքարերից մէկը ֆիներն անուանում են «ըապակիվի», որ կընշանակի «Փթած քար»: Այդ քարը ամենաին չի բանում շինութիւնների համար, որովհետեւ մէջը շուտ է օդ մտնում, դառնում է փխրուն և ջարդուում մանր կտորների: Անշուշտ շատ էք տեսել այնպիսի քարեր, որոնք դրսից սկսում են փշրուել: Դրանք կարծես թէ ծածկուած են սպիտակաւուն կեղեռվ, որ յաճախ այնքան փխրուն է լինում, որ մի թեթև

հարուածից փշրուում է, բայց նրա տակ գտնուում է դեռ չփոխուած քարէ կորիզը, որը կոտրելն աւելի դժուար է:

III. Ժայռերը բաղկացած են հաներից. չուրն ու օդը փոխում են ժայռերի բաղադրութիւնը:

Կոտրենք ճալաքարերից (բուլյաժնիկ) մէկը և նայենք կոտրած տեղին: Ամենից առաջ կըտեսնենք, որ այդ քարը կարծէք թէ բաղկացած է աւելի մանը առանձին-առանձին կտորտանքից կամ փշրանքից, որոնք պինդ կպչելով միմեանց՝ կազմում են մի ընդհանուր քար: Բայց այս հատիկներն էլ միատեսակ չեն: Եթէ տեսել էք կարմիր հատաքար, կարմիր ու թափանցիկ փշուրների մէջ աւելի մանը կիսաթափանց գորշ հատիկներ կըգտնէք և բազմաթիւ խիստ մանը փայլուն սկ բծեր: Իւրաքանչիւր այդպիսի հատիկ առանձին «հանք» է. այդ ամբողջ քարը բաղկացած է զանազան հանքերից, որոնք կպած են միմեանց: Հատաքարի կարմիր հանքը «դաշտի որձաքար» է (շպատ), գորշ կիսաթափանցիկ հատիկները՝ «վանաքար» են (կվարց), իսկ սկ մանը թերթիկները՝ «փայլար» (սլյուա):—Հատաքարի մէջ ամենից շատը դաշտի որձաքարն է: Նրանից է կախուած և հատաքարի գոյնը: Եթէ նա կարմիր է, հատաքարն էլ կարմիր է լինում, եթէ սպիտակ է՝ հատաքարը գորշ է լինում: Ճիշտ միւնոյն կերպով դաշտ

որձաքարը կազմում է ուրիշ շատ ժայռերի գլխաւոր մասը:

Երբ քարը փոփոխութեան է ենթարկվում, ամենից առաջ փոխւում է և քայքայւում դաշտի որձաքարը: Նրանից գոյանում են ուրիշ երկու, նրան բոլորովին չնմանող, նիւթեր: Սրանից մէկը կարող է լուծուել ջրում, ինչպէս լուծում է ջրում կերակրի աղը, միւսը՝ ջրի մէջ չի լուծում, բայց միենոյն ժամանակ փշրուում է շատ մանր փոշու, որ կարող է քշել ու իր հետ տանել ջրի ամենաթոյլ հոսանքը ինչպէս մի բարակ պղտոր փոշի: Թէ գետնի վրայ հոսող ջուրը և թէ երկրի երեսին թափուող անձրեւ շարունակ գործում են նրան հեղեղելու համար:

Ասում են «կաթիլը քար է ծակում»: Եթէ կաթիլը կաթիլի ետեից շարունակ ընկնում է բարձրից միշտ միենոյն տեղը, ինչքան էլ քարը պինդ լինի, կաթիլները փոքր առ փոքր կըգոյացնեն նրա մէջ խորը փոս: Ի հարկէ, քարը ծակելու համար այդպիսի կաթիլներ պէտք է շատ-շատ ընկնեն. իսկ ամեն մէկ կաթիլի աշխատանքը մեզ համար բոլորովին աննըշմարելի է: Այդպիսի փորուած քարեր յաճախ կարելի է տեսնել հին տների կտուրների տակ: Այդ անձրեւային կաթիլները ողողելով հատաքարը՝ քերում են նրանից ամբողջ դաշտի որձաքարը: Իսկ եթէ անյատանայ դաշտի որձաքարը, փշրում է նաև ամբողջ քարը, ամբողջ հատաքարը. փայլարի կտորտանքը և վանաքարի հատիկները էլ կպած չեն իրար հետ. մի-

ջից դուրս են գալիս և ամբողջ քարը փշրում է: Ճշմարիտ է, այսպիսի փոփոխութիւն շատ դանդաղ է կատարւում, գրեթէ աննկատելի կերպով: Հետզհետէ ողողւում է դաշտի որձաքարը, հետզհետէ մէկը միւսի ետեից թափում են վանաքարի և փայլարի կտորները: Բայց բնութեան համար ժամանակ գոյութիւն չունի: Գուցէ հազարաւոր դարեր անցնեն, մինչև որ մի որեէ հատաքարի ժայռ խորտակուի, բայց այնուամենայնիւնա կըտորտակուի: Զուրը կտանի նրանից փայլարի բոլոր թերթիկները, կտանի վանաքարի բոլոր հատիկները, ինչպէս որ առաջ տարաւ փոխուող դաշտի որձաքարը: Անձրեի կաթիլներից գոյանում են առուներ ու գետեր, և այդ գետերն այժմ կըտանեն իրանց հետ ինչ որ անձրեի կաթիլները հեղեղելով սրբել-տարել են հատաքարից:

Բայց ուր է տանում գետի ջուրն այս քարէ մըրուրը: Նայեցէք մեծ անձրեից յետոյ ողողած արևին: Կըտեսնէք, որ յատակը ծածկուած է շատ բարակ մաքուր աւազով: Եթէ քչփորէք, տակը աւելի խոշոր աւազ կըգտնէք: Քանի որ ջուրը արագ էր վազում արխի մէջ, իր հետ տանում էր մանր աւազն էլ, խոշորն էլ: Երբ անձրեն սկսեց թուլանալ, ջուրն էլ սկսեց աւելի դանդաղ հոսել: Այն ժամանակ խոշոր աւազը տակը նստեց: Իսկ երբ անձրեւ բոլորովին կտրուեց, խոշոր աւազի վրայ փոքրաս-փոքր սկսեց նստել աւելի ու աւելի մանր աւազ:

Առուներն աւելի արագ են վազում քան մանր

գետակները, իսկ մանր գետակներն աւելի արագ, քան խոշոր գետերը։ Մանր գետերից կազմւում են մեծ գետեր։

Ինչքան ջուրը կամաց է հոսում, այնքան էլ բարակ մրուրը աւելի է նստում նրա յատակին։ Սլրանից է որ արագ գետերում յատակը ծածկուած է խոշոր աւագով, իսկ դանդաղներում՝ մանր աւագով։ Այսպէս, գետի ջրից փոքրառփոքր նստում է այն, ինչ որ ջուրը վերցրել է ուրիշ տեղից։ Եւ գետի բերած այդ հողը անուանում են օգետի շեղջակոյտ։

Գարնան և աշնան, երբ ձիւնն արագ է հալւում կամ շատ անձրե է գալիս, ամեն մէկ գետում շատ առուներ են թափւում։ Նրանք շրջակայ դաշտերից ու անտառներից հեղեղում են այն ամենը, ինչ որ կարող է ջուրը տանել։ Գետը այս աղբից դառնում է պղտոր, անթափանց։ Բայց կանցնի որոշ ժամանակ և գետի ջուրը նորից կըպարզուի։ Ամըողջ պղտորութիւնը գետը տակն է անում և թողնում այնտեղ ինչպէս գետի շեղջակոյտ։

Ամենից առաջ նստում է վանաքարի կտորտանքը։ Սովորական աւագը բաղկացած է այդպիսի վանաքարի վշուրներից կամ, ինչպէս անուանում են, «աւազահատեր»ից։ Ամեն մէկ աւազահատ առաջ որևէ ժայռի մասն էր կազմում։ Երբ այդ ժայռը քայքայուեց ու ողողուեց, աւազահատը բաժանուեց նրանից և ջուրը տարաւ նրան։ Աւազահատերից յետոյ ջուրը տակն է անում փայլարը, իսկ ամենից ուշ նա


տանում է այն մրուրը, որ գոյացել է դաշտի որձաքարից։ Այս մրուրը ոչ այլ ինչ է, բայց եթէ սովորական կաւ։ Դա այնպէս մանր է ու թեթև, որ նըստում է միայն բոլորովին հանդարտ կանգնած ջրում, լճերի ու ծովերի յատակներին, ուր տանում են նըստան գետերը։

Եւ այսպէս, քայքայուած հատաքարից գոյանում են ժայռի երեք նոր բաղադրութիւններ՝ վանաքար, փայլար և կաւ։ Խոնաւ օդը հատաքարը բաժանեց առանձին-առանձին հանգերի, իսկ ջուրը նրանցից շինեց ուրիշ աւելի հասարակ տեսակներ։

IV. Երկրի խորքի տայութիւնը եւ տայ աղբիւներ.

Երկրի վրայ ամենուրեք հին ժայռերը քայքայում են և նրանցից նորերն են կազմւում։ Օդն ու ջուրը աշխատում են ամեն բան փոխել իրանց ուղածի պէս, և աւազի, կաւի ու ուրիշ տեսակների շերտերը ջրի տակ նստելով, աճում են ու մեծանում։

Ջուրը ձգտում է գետինը հարթել։ Բայց նա չի կարող երկրի վրայի բոլոր լեռները հեղեղել։ Իսկ նրա շեղջակոյտերով գետինը նոր լեռներ է կառուցանում, միայն ուրիշ բաղադրութեան և ուրիշ ձևի, քան առաջինները։ Մի տեղ ջուրը հեղեղելով լեռները մաշում է, միւս տեղ բարձրանում են նորերը։ Բայց ին լեռներն էլ ջրից յետ չեն մնում. նրանք էլ հե-



Հեղինակ Տրամահիլանիայում

տղինետէ բարձրանում են, և այն ժայռերի փոխարէն, որոնք օդից ու ջրից քայքայուել են, երկրի խորըից բարձրանում են նորերը, երկիրը կըռ- ում է ջրի հետ և կը կռուի մինչև նրա ներսը կը հանգչի այնոյժը, որ աստիճանա- բար լեռներ է բարձրաց- նում և ըս- տեղծում է միշտ ժայ- ռերի նորա- նոր տեսակ- ներ:

Բայց ի՞նչ
ոյժ է այդ...

Այդ ոյժը
երկրի ներսի
տաքութիւ-
նընէ: Երկի-

րը գրսից սառն է. նա տաքանում է միայն արևի ճա- ռագայթներով. բայց երկրի խորքում այնպիսի տա-

քութիւն կայ, որ երևակայել անգամ չենք կարող...

Զուրը, ծծուելով երկրի ներսը, տաքանում է: Ինչքան խորն է նա թափանցում, այնքան աւելի է տաքանում: Վերջապէս այդ տաքութիւնն այնքան է մեծանում, որ ջուրն սկսում է եռալ, փոխում է շոգիի: Այսպէս են գոյանում այն տաք աղբիւրները, որոնք շաղբուաններով դուրս են բղխում երկրից, եթէ այդ աղբիւրները շարունակ չեն խփում, այլ երբեմն երբեմն, կոչւում են «հեղիներ»: Հեղիների ջուրը տաքանում է երկրի խորքում:

Եթէ շիշը բերնէ բերան լցնէք սառը ջրով և յե- տոյ սկսէք տաքացնել, կրտեսնէք, որ կարճ ժամա- նակից յետոյ շշի ջուրը կարծէք թէ կըսկսի աւելա- նալ և մի մասը դուրս կըթափուի շշի բերանից: Նշա- նակում է, տաք ջուրը աւելի մեծ տեղ է բռնում, քան սառը: Զուրը տաքութիւնից, ինչպէս ասում են, լայնանում է: Այսպէս էլ այն ջուրը, որ ներս է թափանցում երկրի խորքը և այնտեղ տաքանում, լայնանում է: Տաքութիւնից աւելի շատ լայնանում է ջրային շոգին կամ գաղը: Մակայն երկրի խոր- քում ազատ տեղ չըկայ. Ջուրը մուտք է գործել այն- տեղ երկար, նեղ ճեղքերով և շի կարող այդ ճեղքե- րով էլ յետ դուրս գալ, որովհետեւ նրանցով վերեկց շարունակ նորանոր ջրեր են ներս մանում: Այդ ջուրը բռնում է և խցում այդ նեղ անցքերը: Եւ ահա տա- քացած ջուրը կամ շիկացած ջրային շոգին, դուրս գալու ճանապարհ որոնելով իր համար, սկսում է զարհուրելի կերպով ճնշել իր ստորերկրեայ բանտի


Քարէ պատերը: Ինչքան ուժով է ջուրը կամ շոգին տաքանում, այնքան մեծ է լինում այդ ճնշումը: Վերջապէս էլ ոչ մի ոյժ չի կարողանում պահել նըրանց երկրի խորքում: Խլացնող շառաչիւնով դուրս են ժայթքում նրանք ստորերկրեայ նեղ անցքերով, դուրս շպրտելով երկրից այն բոլոր ջուրը, որ գըտնում էր աւելի բարձր, և ջրային ահագին շաղքուան խփում է վերև: Այսպէս են խփում հեյզէլները:

V. Հալուած նիւթերի եւ բարերի արտավիժումը եւ նրաբուղիներ:

Եթէ դուք սկսէք ջուրը տաքացնել ծածկած ամանում, օրինակ, պինդ խցուած շի մէջ, ջրային գոլորշին շիշը կըտրաքացնի: Ոչ մի շիշ չի կարող դիմանալ նրա ճնշողութեան: Ինչքան ամանը պինդ լինի, այնքան նրա պատերը երկար կըդիմադրեն շոգիի շարունակ աճող ճնշման, բայց այնքան էլ ուժեղ կլինի, ՚ի հարկէ, պայթիւնը:

Հենց այսպիսի պայթիւններ տեղի են ունենում և երկրի վրայ տեղ-տեղ, երբ ջրային շոգին նրա խորքում ելք չի գտնում իր համար: Պայթիւնից մի քանի ժամանակ առաջ երկրի ներսը լսւում է թընդիւն, հեռաւոր որոտի արձագանքի նման: Երբեմնապէս գետինը դողում է, ինչպէս շոգեմեքենայի պղնձի պատերը: Ստորերկրեայ որոտի ձայները հետզհետէ ուժեղանում են և յաճախում: Վերջապէս էլ ոչ մի

բան չի կարողանում բռնել ջրային շոգին: Երկրի վրայ երեսում են նոր բացուած լախ ճեղքեր, և նըրանց միջից շիկացած շոգին շուցով և զարհուրելի



Հաւայի արտավիժումը

ուժով ձգտում է դէպի վերև: Նա իր հետ քաշում է այն ամենը, ինչ որ պատահում է ճանապարհին: Շատ յաճախ, եթէ ճեղքը բաւական խորն է, շոգին



Երկրի խորքից դուրս է շպրտում շիկացած հանքեր: Մենք չգիտենք, թէ ինչ ձե ունին այդ հանքերը այն խորութեան մէջ, որտեղից նրանք բարձրանում են շոգու ուժով: Բայց երկրի մակերևոյթի վրայ նրանք դուրս են գալիս արդէն ոչ թէ պինդ քարի նման, այլ իբրև կրակէ հեղուկ, որ անուանում է «լաւա»:

Ամեն մի նիւթ, որ տաքութիւնից չի փոխւում, կարելի է տաքացնելով հալել, այսինքն, ուրիշ խօսքով, հեղուկ դարձնել. իսկ իւրաքանչիւր հեղուկ կարելի է փոխել շոգու: Երկաթի կտորը տաքանալով սկզբում շիկանում է, դառնում է կարմիր: Ինչքան սաստիկ տաքացնենք, այնքան բաց գոյն է ստանում և այնքան պայծառ է փայլում: Վերջապէս նա բոլորովին սպիտակում է, և այնպէս պայծառ լոյս է ունենում, որ վրէն նայել չի լինում: Սրանից յետոյ երկաթը հալւում է, փոխւում է ծանր փայլուն հեղուկի: Եթէ շարունակենք տաքացնել, երկաթէ հեղուկը եռ կգայ: Նա կփոխուի «երկաթէ շոգու»:

Ինչպէս երկաթը, այնպէս էլ քարը կարելի է հալել: Գուցէ և բոլոր նիւթերը երկրի խորքում հալուած վիճակի մէջ են: Գիտենք միայն, որ տաքութիւնը երկրի խորքում այն սատիճան գօրեղ է, որ կարող է հալել ամեն մի ցանկացած հանք: Գիտենք նոյնպէս, որ եթէ այդ հանքերը երկրի կորիզից դուրս շպրտուին շոգու ոյժով, նրանք երկրի ձեղքերից դուրս կը հոսեն ինչպէս կրակէ գետեր:

Եւ այսպէս, ջրի տարած հանքերի փոխարէն գետնից դուրս են թափւում նոր տեսակ հանքեր:

Այդ հանքերից շատերը, որոնցից կազմուած են լեռները, երբեկից միենոյն եղանակով են դուրս եկել երկրի խորքից: Նրանք արտավիժուել են երկրից, և այս պատճառով նրանց անուանում են «արտավիժած հանքեր»:

Այս հանքերի արտավիժուելու ժամանակ երկրից ժայթքող շոգին դուրս է ածում նրանց առանձին առանձին կտորները օդի մէջ: Գիշերը այդպիսի բազմաթիւ շիկացած լոյս արձակող քարեր, դէպի վեր թուշելով, ահազին հրավառութեան են նմանում: Իսքը ջրային շոգու սիւնը թւում է իբրև կրակէ լուսատու սիւն: Եւ իրաւ, նա լոյս չի տալիս, այլ միայն իրանից հեղանիւթ լաւայի կուրացնող լոյս է արձակում:

Յերեկն այդ սիւնը մութ-գորշ գոյն ունի, որովհետեւ շոգու հետ դուրս է հոսում մեծ քանակութեամբ սկ աւազ, կամ «մոխիր»: Այդպիսի ամեն մէկ աւազահատ ոչ այլ ինչ է, բայց եթէ սառած լաւայի մանրիկ կաթիլ: Աւելի մանր աւազահատերը հաւաքւում են երկինքը ծածկող սկ ամպերում, իսկ աւելի խոշորները իսկոյնեեթ նորից ցած են ընկնում: Նրանք անձրկի նման թափւում են վերեից, և շատ շուտով ժայթքած տեղի շուրջը հաւաքւում է այդպիսի աւազահատերի և դուրս թափւուած քարերի ամբողջ մի կոյտ: Կոյտը ածում է և փոքր առ փոքր դառնում կատարեալ սար: Այսպիսի սարերը կոչւում են «հրաշունչ» սարեր կամ «հրաբուղիներ»:

զարհուրանքով թողին իրանց քաղաքը և հեռու փախան սարից... Բայց այս երկրաշարժը միայն առաջին գուշակն էր փոթորկի, նա դադարեց, և փոքր առ փոքր ամեն ինչ հանգստացաւ, Քաղաքի կեանքը նորից շարունակուեց նախկին կարգով...

Անցաւ ամբողջ տասնեվեց տարի, Եւ ահա գետինը նորից դողդողաց շոգու ճնշումից, որ դուրս գալու ճանապարհ էր որոնում երկրի խորքից, Նորից որոտաց անդունդը, աւելի ուժեղ, և գետինը տեղի տուեց. Տեղի ունեցաւ մի զարհուրելի պատուածք, Քարերի կոյտեր և ամբողջ ժայռեր դուրս թափուեցին օդի մէջ. Մոխրի սև սիւն բարձրացաւ սարի գլխին: Նա ծածկեց երկինքը և աչքից ծածկեց հէնց ինքը սարը. Սարի շուրջը ամեն ինչ թաղուեց խաւարի մէջ: Մոխրը ու աւազ թափուեց գետնին, սարի լանջերն ու շրջակաները ծածկելով սև հաստ շերտով: Զրային շոգիներ սկսան դուրս ժայթքել այնքան շատ, որ նրանից կազմուեց ահագին ամպ, որը լեռան գլխին փոխուեց զարհուրելի փոթորկալից հեղեղի: Այս ջրից, գուցէ և այն ջրից, որ գետնի տակից դուրս շպրտուեց շոգու հետ միասին, կազմուեց սարսափելի հեղեղ, Զուրը խառնուեց մոխրի հետ, փոխուեց սև հեղուկ ցեխի, որ լայն գետերով թափուել սկսեց լեռան գառիվայրերից: Այս ցեխը տանում էր իր հետ այն ամենը, ինչ որ պատահում էր ճանապարհին: Հոսանքը հասաւ հոռվմէական Պօմպէյ քաղաքին, որ ձգւում էր Սօմմահ միւս կողմը և մի քանի րոպէում քաղաքը լցուեց: Հեղուկ, լը-

պըրծուն ցեխը թափանցեց ամեն տեղ, Նա լցրեց թէ փողոցները, թէ տները և խեղդեց բնակիչներից նըրանց, որնք չհասցրին կամ չկարողացան վաղօրօք հեռանալ քաղաքից: Ցեխի հոսանքին հետեւ մի ուրիշ զարհուրելի հոսանք, - հալուած լաւայի կրակէ հոսանքը, Ճշմարիտ է, լաւան աւելի դանդաղ է հոսում, բայց միենոյն ժամանակ իր ծանրութեամբ և տաքութեամբ նա աւերում է ճանապարհին ամեն բան: Լաւան լցրեց Հերքուլանումը, անցաւ նրա միջով և հասաւ մինչև ծով:

Երբ արտավիժումը դադարեց և քամին ցըռւեց մոխրի սև ամպերը, Սօմմահ տեղում զարմացած հռոմայեցիք տեսան մի նոր սև սար, Հին Սօմմահց մնացել էր միայն մի ծայրը նոր սարից դէպի հիւսի: Մնացեալ ամբողջ մասը, որ նայում էր գէպի ծով, անյայտացել էր: Նա աւերուել էր պայթիւնից, իսկ փոխարէնը բարձրանում էր մի նոր սար գազաթին փոքր բերանով, որից դէպի երկինք բարձրանում էր ջրային շոգիների սպիտակ սիւն:

VII. Մի զրուանի Վէզուվի վրայ.

Նոյեմբերեան տաք առաւօտներից մէկն էր. Երբ ես բարեկամիս հետ նէապօլից ուղերուեցի Ռէզինա գիւղը: Դեռ Ռէզինաին չհասած, ճանապարհին սկսեցինք նկատել հրաբուղիսի գործունէութեան հետքեր: Փողոցի ցեխը հետզհետէ սեանում էր մէջը հրաբուղիսի մոխրի խառնուելուց: Տեղաեղ

հանդիպում էին շինութիւններ, երկրաշարժից կիսաւեր և լաւայի կտորտանքով լիքը:

Ուզգինախն որ հասանք՝ ճանապարհ ընկանք ոտքով, վերցնելով մեզ հետ մի կողովով կերակուր և երկու ցուլք՝ Գլխաւոր փողոցից շուռ եկանք կողքի փողոցը և սկսեցինք բարձրանալ։ Մեր ոտների տակ էլ արհեստական մայթ չկար լաւայի սրուած սալաքարերից, այլ ուղղակի սառած լաւայի հոսանք։ Ինքը բնութիւնն այստեղ շինել էր մայթ, աւելի հաստատուն, քան կարող էին շինել մարդիկ։ Վեզուվի վրայ անց էր կացրած գեղեցիկ խճուղի, բայց ես բարձրանում էի աւելի ուղիղ ճանապարհով պարտէզների ու այգեստանների միջի շաւղով։ Մենք շուտով անցանք հին լաւայի հոսանքը։ Ամեն ինչ ոչնչացնող ժամանակն արդէն հարթել էր նրա անհարթութիւնները և տեղտեղ ծածկել հողի շերտով։ Այժմ նրա վրայ աճում էին հաստ նարնջիներ և թղենիներ, ահագին ագաւենիներ և բազմաթիւ ուրիշ թուփեր ու ծառեր։

Մի քանի քայլ էլ և մենք հասանք լաւայի աւելի թարմ, ահագին հոսանքին, որ դուրս էր թափուել Վէզուվի բերանից 1872 թուին։ Եւ մինչև այսօր էլ պահպանել էր իր մակերեսոյթի տարօրինակ տեսքը։

Եթէ ձեզ պատահել է տեսնել խէժի չորացած թափուածքներ հինաւուրց եղենիների բների վրայ, կարող էք պատկերացնել սառած լաւայի տեսքը։ Ամենից առաջ սառչում է նրա վերեի մասը։ Երբ դեռ լաւայի հոսանքի ներսուկ է և էլի կարող

է ներքև հոսել, հոսանքի վերել ծածկում է արդէն սառած կեղեռվ։ Բայց այդ կեղեռ դեռ փափուկ է լինում։ Նա առաջ է մղում հեղուկ լաւայի ճնշումով, որ շարժւում է նրա տակ. լաւայից դուրս եկող գազի ճնշումից ուռչելով՝ նա բշտիկներ է գոյացնում, բշտիկները արաքւում են, պնդացած կեղեւից ինչպէս իւղ կամ խէժ նորից դուրս է գալից աւելի հեղուկ լաւա։ Սառած լաւայի ամբողջ հոսանքը, որի վրայով մենք առաջ էինք գնում, ծածկուած էր այդպիսի բշտիկներով և դեղին, գորշ և մոխրագոյն մեծաքանակ թափուածքներով։ Դա ինձ յիշեցնում էր գանդուրները կամ մանր կլոր ալիքները, որոնք թափում են մէկը միւսի վրայ առանց որեէ կարգի։ Այս քարէ ալիքներով բարձրանալը յոգնեցնում էր, և մենք շուտով շուռ եկանք խճուղու վրայ և տեղաւորուեցինք լաւայի մի մեծ կտորի ստուերի տակ՝ հանգստանալու և նախաճաշելու համար։ Այս տեղից մենք կարողացանք մի հայեացքով աչքի անցնել ամբողջ Նէապոլը, Նէապոլական ծովի գեղեցիկ ծովափը, որ ամբողջովին թաղուած էր պարտէզների կանաչի մէջ, և անսահման կապուտակ ծովը։

Ոյժներս կազդուրելով և սքանչանալով տեսարանի գեղեցկութեամբ, խճուղիով շարժուեցինք դէպի առաջ... լաւայի տեսարանը յանկարծակի փոխուեց։ Սկսուեց նոր լաւայի մի հոսանք, որ միայն չորս ամիս առաջ էր գետնին դուրս վիժել։ Նրա մակերեսոյթը բոլորովին սև գոյն ունէր։ Փայլում էր արևի տակ, թէպէտև հարթ չէր, այլ աւելի շուտ նը-

մանում էր խորդուբորդ, բազմաթիւ մանր կոծիծներով ու խորշերով ծածկուած սպունգին, Խորշերը գոյացել էին լաւայի սառելու ժամանակ շոգիով լիքը մանր բշտիկների տրաքուելուց, Նրանց սուր ծայրերի վրայ երկու անգամ ձեռքս կտրեցի:

Աւելի բարձր այս հեղեղը կտրեց մեր խճուղին, և մենք ստիպուած էինք վրայից անցնել, մեր ճանապարհը շարունակելու համար: Նրա միւս կողմը դեռ մէկ ու կէս վերստ շարունակում էր խճուղին: Մենք բարձրացանք այն հովիտը, որ հին Սօմման բաժանում էր Վեզուվից, և դեռ տաք լաւայի վրայով, անցնելով ճեղքերի վրայից, որոնցից տաքութիւն էր շնչում, դիմեցինք հէնց լաւայի դուրս զալու տեղը: Լաւան բերանից չէր դուրս գալիս, որտեղից դուրս էին գալիս միայն սպիտակ շոգու քուլաներ, այլ նրանից աւելի ցածր, հրաբուղիս կողքի բացուածքից: Այդտեղ էր գտնուում «բերանը», իսկ նրանից լայն հոսանքով անդադար դուրս էր թափում կրակէ հեղանիւթ: Անտանելի շոգի պատճառով չէր կարելի նրա մօտ կանգնել, բայց մի վայրկեան խոնարհելով, կարելի եղաւ ներս նայել սպառնալի հրաբուղիսի նոյն իսկ բերանի մէջ: Մի փոքր ներքեայդ հոսանքը փոխւում էր կրակէ գետի, որ դանդաղութեամբ հոսում էր խորը տաշտի միջով: Աւելի հեռու նա անյայտանում էր սև կեղտերի շերտի մէջ, և միայն շարժողութիւնից կարելի էր նկատել որ հոսում է:

Վերադառնալիս՝ երկու իտալացու մի քանի


մանը դրամ տուինք և նրանք երկար երկաթէ կրակախառնիով խորը ճեղքից հանեցին մեզ համար լաւայի դեռ փափուկ մի կտոր, մանը փողը ճխտեցին վրէն և ես այդ քարը, փողն էլ մէջը, պահեցի իբրև Վեզուվի յիշատակ:

Ինչքան էլ զարհուրելի է Վեզուվը արտավիժելու ժամանակ, բայց և այնպէս Նէապոլիցիք սիրում են իրանց հրաբուղիսը: Նէապոլի գրեթէ բոլոր նկարների վրայ կայ և Վեզուվի պատկերը: Նա իտալացիներին կերակրում է նրանով, որ իր մոխիրով պարարտացնում է շրջակայ դաշտերը: Նրա լանջերի վրայ փոռւած են ամենալաւ պտղատու պարտէզներ և այգեստաններ:

VIII. Թէ ի՞նչքան է երկրի ներսի տաքութիւնը.

Տաք աղբիւրներն ու հրաբուղիները վկայում են, որ մեր երկրի ներսը տաքութիւն կայ: Եթէ այդ տաքութիւնը չլինէր, մենք կարող էինք շատ խորը թափանցել երկրի ներսը: Բայց տաքութիւնն արգելում է: Այնտեղ, ուր որ զանազան հանքեր են հանում, երկրի մէջ բաց են անում խորը անցքեր: Մարդկանց ձեռքով փորուած այդպիսի անցքերը կոչւում են «հանքանորեր» (շախտա): Երբեմն նրանք շինւում են պինդ ժայռերի ներսը, քարէ սարերի մէջ և նեղ քարայրերի տեսք ունին: Այս ոլորմոլոր ցածր անցքերով, լամպի լուսի տակ, կուցած, յետ ու առաջ են շարժւում բանուորները, «հանքահանները»:

Նրանք կեանքի կէսն անց են կացնում մթանը գետնի տակ: Նրանց աշխատանքը խիստ ծանր է, շատերը ծերանում են և մեռնում ժամանակից առաջ: Բայց մեռնողների տեղը բռնում են նոր աղքատ մարդիկ, և ստորերկրեայ անցքերն աճում են, երկարում: Ինչքան խորն են իջնում հանքահորերը, այնքան ծանր է լինում հանքահանների աշխատութիւնը: Օդը ծանրանում է, ծանր հոտը մեծանում,



Հանքահորերի ճաւաքը

և վերջապէս, հասնում են այնպիսի մի տեղ, ուր արդէն անկարելի է լինում աշխատել. տաքութիւնը հասնում է մինչև 40 աստիճան և աւելի, և ամենամուր մարդն անգամ հազիւ է կարողանում այնտեղ մի քանի բոլէ միայն մնալ:

Ամերիկայում արծաթէ հարուստ հանք կայ: Հին

ժամանակ մի տարում նրանից հեղտութեամբ հանում էին երեսուն միլիոն ռուբլու արծաթ: Բայց տարէցտարի հանքահորերն իջան ներքե, աշխատելը դժուարացաւ, և այժմ հանքի խորը անցքերում, որ համարեա թէ մէկուկէս վերստ ներքե է իջնում գետնի խորքում, բանուորները չեն կարողանում տաս րոպէից աւելի մնալ:

Սակայն, առանձին մեքենաների օգնութեամբ կարելի եղաւ աւելի խորը անցքեր կամ, աւելի ճիշտ ասած, ջրհորներ փորել: Շատ խորը ջրհոր գտնւում է գերմանական մի քաղաքի, Ռիբնիկի մօտ: Նա հասնում է մինչև համարեա երկու վերստ խորութեան, և նրա յատակում տաքութիւնը անշուշտ 48 աստիճանից պակաս չէ:

Եթէ սրանից այն կողմն էլ երկրի խորքում տաքութիւնը այդպէս է աւելանում, ապա երկրագնդի հէնց մէջտեղը 15,000 աստիճանից պակաս տաքութիւն չպէտք է լինի: Այս այնպիսի ուժեղ տաքութիւն է, որի մէջ բոլոր նիւթերը ոչ միայն պիտի հալուեն, հեղուկ դառնան, այլ և եռան և շոգիի փոխուեն: Մեր երկրագնդի ներսի մասը բաղկացած է շիկացած հեղուկ նիւթերից: Միայն նրա արտաքին շերտը բոլորովին սառած է: Այս շերտը շիկացած կորիզի շուրջը կազմել է պինդ կեղե, որի վրայ մենք անց ենք կացնում մեր կեանքը: Մենք չզիտենք, թէ ինչ հաստութիւն ունի այդ կեղեր, բայց համեմատելով երկրի մեծութեան հետ՝ շատ բարակ է:

IX. Երկրի սառելը. մոլորակ կոչուած երկիրները:

Ո՞րտեղից է մեր երկրի տաքութիւնը. Այս հարցի վրայ շատ են մտածել և էլի մտածում են զիտնական մարդիկ: Մենք միայն կարող ենք ասել, որ երկրի տաքութիւնը քիչ-քիչ պակասում է, երկիրը սառչում է, ինչպէս ամեն մէկ տաքացած բան: Ինչքան էլ դանդաղ է կատարւում նրա սառելը, բայց հեռու ապագայում, եթէ ոչինչ արգելք չպատահի, երկիրը բոլորովին կսառի: Այն ժամանակ արդէն երկրի վրայ ոչ հրաբուղի կլինի և ոչ տաք աղբիւրներ: Երկրի խորքը ծծուռող ջուրը էլ նորից չի դուրս գայ մակերևոյթի վրայ: Այլ կմնայ խորքում և այնտեղ կսառի, որովհետև այնտեղ չեն թափանցի արեգակի տաք ճառագայթները, և այնտեղ աւելի ցուրտ կլինի, քան երկրի երեսին: Փոքրառփոքը ամբողջ ջուրը այսպիսով կարող է մտնել երկրի մէջ, գետերը կծանծաղանան, ծովերն ու ովկիանոսները կցամաքեն: Ամբողջ երկիրը կփոխուի սառը, անջուր անապատի: Ոչ մի բոյս, ոչ մի կենդանի չի մնայ երկրի վրայ...

Ո՞վ գիտէ, սակայն, թէ ինչ վիճակ է սպասում մեր երկրին: Նրա ապագան ծածկուած է մեզանից, ինչպէս ծածկուած է նրա հեռաւոր անցեալը: Բայց մենք կարող ենք շատ բան իմանալ. եթէ մեր երկիրը համեմատենք երկնքի լուսաւորների և ուրիշ երկիրների հետ: Ասում եմ «ուրիշ երկրների», կարծէք թէ բացի մեր երկրից, էլի ուրիշ երկիրներ էլ

գոյութիւն ունեն: Արդարեւ, մեր երկրի նման երկիր աշխարհում մէկը չէ, այլ շատ կան: Օրինակ, լուսինը նոյն տեսակ մի երկիր է, ինչ որ մերն է: Լուսինն իր լոյսը ստանում է արեից: Արեգակը լուսաւորում է նրան, ինչպէս և մեր երկրին, և գիշերները մեզ թւում է, թէ լուսինն է փայլում, թէ պէտև ինքը լոյս չի տալիս: Ինչպէս մեր երկիրը, այնպէս էլ լուսինը ամեն կողմից կլոր են, այսինքն՝ գնդի ձև ունեն: Հին ժամանակ մարդիկ կարծում էին, թէ երկիրը հարթ շրջանի նմանութիւն ունի: Մարդիկ հաւատում էին, որ եթէ շարունակ մի կողմ գնանք, առանց այս ու այն կողմ ծռուելու, վերջի վերջոյ երկրի ծայրին կհասնենք: Կարծում էին թէ այդ ծայրի միւս կողմը սկսւում է ծովը, որ մի տեղ ափից հեռու վերջանում է անյատակ անդունդով: Նրանք վախենում էին ափից հեռու լողանալ: Վախենում էին որ ընկնեն այդ անդունդի մէջ, որից էլ յետ գալ չկայ: Ամբողջ երկիրը նրանք համարում էին մի բարձր կղզի, ահագին ովկիանոսի վրայ դրուած: Թէ ինչի վրայ էր պահում այդ կղզին և ինչո՞ւ չէր ընկղմում ջրի մէջ ծովային ալիքների տակ, — ոչ ոք չգիտէր:

Այժմ արդէն այդպիսի առասպելներին հաւատացող չկայ: Ամեն մարդ գիտէ, որ երկիրը հարթ կղզի չէ, այլ գունդ է և որ ոչ թէ երկիրն է դըրուած ջրի վրայ, այլ ջուրն է հաւաքուած երկրի փոսերում: Երկիրը չի կարող կանգուն մնալ ջրի վրայ, որովհետև ջրից ծանր է: Անտակ ծովեր չեն


կարող լինել։ Իւրաքանչիւր ծով յատակ ունի, որ ծովի շուրջը վերջանում է ծովափով։ Մենք այժմ գիտենք, որ եթէ շարունակ մի կողմ գնանք, վաղ թէ ուշ կպտտենք երկրագունդը և կհասնենք այն տեղին, որտեղից դուրս ենք գնացել, միայն հակառակ կողմից։ Այժմ մարդիկ շարունակ ճանապարհորդութիւնների մասին։

Ինչպէս մեղ մօտ, երկրի վրայ, այնպէս էլ լուսնի վրայ, կան սարեր և հովիտներ։ Երբեիցէ ուշադրութեամբ նայեցէք լրացած լուսնին։ Կտեսնէք, որ ամբողջապէս ծածկուած է մի տեսակ գորշագոյն բծերով, շրջանակներով և շերտերով։ Հէնց այս մութ տեղերն են հովիտները և անձաւները, որոնք աւելի թոյլ են լուսաւորուած արեգակի ճառագայթներով, քան նրանց շրջապատող բարձրութիւնները, և այս պատճառով էլ թւում են մութ։

Հին ժամանակ լուսնի մեծ գորշ բծերը համարում էին ծովեր, այժմ այդ միտքը անընդունելի է համարւում։ Լուսնի վրայ ոչ ջուր կայ, ոչ ամպ և ոչ օդ։ Լուսնի մակերեսոյթը բոլորովին մեռած է։ Դա մի անապատ է, որի վրայ ոչ բոյս կայ և ոչ կենդանի։

Եթէ լուսինը մեղ մօտիկ լինէր, նրա սարերը կարելի էր շատ լաւ տեսնել, բայց լուսինը շատ հեռու է երկրից, և ամեն մարդ գիտէ, որ հեռուից բոլոր առարկաները փոքր են թւում և վատ են ե-

րեռում։ Եթէ կարելի լինէր լուսնի մօտ զնալ երկաթուղիով, պէտք էր կէս տարուց աւելի ճանապարհորդել ամենաարագ զնացքով։ Ահա թէ ինչքան հեռու է մեզանից լուսինը։ Սրա համար էլ մեզ փոքր է թւում։



1. Երկրի պինդ միջուկը։—2. Կրակէ հեղուկ։—3. Միջին շերտ։—4. Երկրի պինդ կեղե։—5. Հիւսային Ամերկա։—6. Աֆրիկա։—7. Հիմալայեան լեռնադաշտ։—8. Առլանտեան ովկիտանու։—9. Մեծ ովկիանու։

Իսկ ուրիշ ընկերները, որոնք «մոլորակներ» են կոչում, մեր երկրից աւելի հեռու են, քան լուսինը։ Ահա թէ ինչու նրանք մեղ աւելի մանր են երեռում։ Նրանց կարելի է տեսնել միայն գիշերը, որովհետեւ նրանք, ինչպէս լուսինը, իրանց լոյսը

ստանում են արեգակից: Գիշերը նրանք աստղերի նման են, բայց իսկական աստղերը իրանք են լոյս տալիս, իսկ մոլորակները արեի լոյսն են արձակում իրանցից: Իսկական աստղերը լոյս են տալիս ինչպէս արեգակը, և եթէ այնքան հեռու չլինէին մեզանից, նրանց լոյսը արեի լուսից թոյլ չէր լինի:

Առանց դիտակի մոլորակը հեշտութեամբ կարելի է շփոթել իսկական աստղի հետ. բայց եթէ աստղերի մէջ տեսնէք այնպիսին, որ վառում է բոլորովին հաւասար, չփայլվլող լուսով, դա, անշուշտ, աստղ չի լինի, այլ մոլորակներից մէկը:

Երկիրների մեծ մասը, սակայն, մեզանից այնքան հեռու են, որ նրանց չի կարելի տեսնել նոյն իսկ ամենաուժեղ դիտակներով, թէպէտե նրանցից շատերը, անշուշտ, ամենեին փոքր չեն այն երկրից, որի վրայ մենք ապրում ենք:

Ինչքան փոքր է մոլորակը, այնքան արագ պէտք է նա սառչի: Ինչպէս որ մեծ վառարանը փոքրից աւելի երկար ժամանակ է տաքութիւնը պահում, այնպէս էլ մեծ մոլորակները աւելի դանդաղ են սառչում, քան փոքրերը: Մեր լուսինը, կարելի է ասել, արդէն բոլորովին սառել է, երկրի ներսը դեռ մնում է շիկացած կենդրոն, իսկ ամենամեծ մոլորակների վրայ մինչև այժմ այնպիսի պինդ կեղե չկայ, ինչպէս երկրիս վրայ: Մենք կարող ենք ուժեղ դիտակով նրանց մակերեսովին վրայ տեսնել կիսահեղուկ, դեռ չսառած քարի ահագին հոսանքներ կանոնաւոր շերտերի ձևով, կարող ենք դիտել այդ հոսանքների

շարժումը և հետեւ նրանց ձևավոխութեան: Հաւանօրէն, մեր երկիրն էլ մի ժամանակ այնպիսի հալուած, հեղուկ գունդ էր և միայն հետզհետէ, շատ հազարամետակների ընթացքում, սառեց երեսից և ծածկուեց պինդ կեղեով:

X. Թէ ինչպէս գոյացան սարերը եւ ինչպէս են անում երկրի վրայ

Երկրի կեղեւ երկար ժամանակ տաք մնաց, և երկրի վրայ երկար ժամանակ ոչ սար կար և ոչ ծով: Այն ջուրը, որ անդադար անձրեներով թափւում էր երկրի վրայ, չկարողացաւ մնալ այնտեղ: Անձրկի կաթիլները, ընկնելով տաք հողի վրայ, իսկոյն նորից շոգիի էին փոխւում և թոշում դէպի վեր: Կարող էք երեակայել, թէ ամպերի որպիսի թանձր ու հաստ շերտ պէտք է լինէր այն ժամանակ ամբողջ երկրի վրայ: Բոլոր ջուրը, որ այժմ հոսում է երկրի վրայ և լցնում երկրի բոլոր փոսերը, այն է ճահիճները, լճեր ու ծովերը, այն ժամանակ շոգիի փոխուած պատում էր երկիրը: Ամբողջ օդը, բաղնիքի նման, լցուած էր այդ տաք շոգիով: Բայց ինքը օդն էլ բոլորովին ուրիշ էր: Նրանում ուրիշ շատ գազեր էլ կային, ինչպէս այն ջրային շոգիների մէջ, որոնք դուրս են գալիս այժմ հրաբուխների բերաններից: հետզհետէ միայն երկրի օդը մաքրուեց կենդանիների և բոյսերի համար այդ վասակար խառնուրդներից:

Ամպերում գտնուած ջուրը չէր թողնում որ
երկիրը սառի և տաք շորի տեղ էր ծառայում նրան։
Բայց անձրեկի կաթիլները, ամեն կողմից թափուելով
երկրի վրայ, պէտք է շոգիանալու ժամանակ երկրի
կեղեկից տաքութիւն խլէին և տանէին դէպի վեր։

Ինչ էլ լինէր, երկրի սառելը կամ աց-կամաց
առաջ էր գնում, իսկ հետը միասին կարեոր փոփո-
խութիւն էր տեղի ունենում նրա մակերեսոյթի վրայ։
Որպէսզի այդ հասկանանք, պէտք է երեակայենք մի
մեծ հալած գունդ, ամեն կողմից պատած բարակ
պինդ կեղեկով, ինչպէս կճեպով։ Ամեն մի առարկայ
տաքանալով լայնանում է. այն նիւթի մասնիկները,
որից բաղկացած է առարկան, բաժանում են, իսկ
սառելուց կուչ գալիս։ Ասենք թէ ձեր գունդը սա-
ռեց, այսինքն՝ կուչ եկաւ, փոքրացաւ։ Ինչ կդառ-
նայ նրա կճեպը։ Կճեպը պինդ է, նա չի կարող այն-
պէս սղմուել, ինչպէս սղմում է ինքը գունդը։ Բայց
պինդ կպչում է նրան ամեն կողմից. գնդի ու կճեպի
մէջտեղ ամեննին ազատ տեղ չի մնում։ Եւ ահա այս
հարթ կճեպի վրայ, հէնց որ գունդը սկսի կծկուել,
խորշոմներ կերեան։ Նա կնճոռտում է ինչպէս խո-
րոված կամ չմշկած խնձոր։ Երբ խնձորը չորանում
է, կճեպը կնճոռտում է. կնճոռտում է նրա համար,
որ չի կարող այնպէս կուչ գալ, ինչպէս կուչ է գա-
լիս և փոքրանում է ինքը խնձորը։

Նոյնը պատահել է և երկրի կեղեկին։ Հէնց որ
նա բաւականաչափ պնդացել է, սկսել է կնճոռտուել,
նրա վրայ երեացել են ծալքեր և ճեղքուածներ,

Ճեղքերից նորից դուրս է հոսել հալուած զանգուած,
շաղ է եկել, ինչպէս հրաբուղիներից արտավիժած
լաւան։ Բայց նորից սառել է, երկրի կեղել հաստա-
ցել է և նրա ծալքերը մեծացել են։

Հէնց այս ծալքերն էլ եղել են առաջին սարե-
րը մեր երկրի վրայ։ Սարերը, որոնք մեզ թւում են
այդքան մեծ ու բարձր, երկրի հետ համեմատած
փոքրիկ կնճիռներ են, ոչ աւելի քան նարնջի կաշուի
կնճիռները իրան՝ նարնջի հետ համեմատած։ Ուրեմն
սարերը երկրի կեղեկի կնճիռներն են։ Ահա թէ ինչու
նրանք սովորաբար ձգւում են երկար լեռնաշղթա-
ներով, ահա թէ ինչու մէկ լեռնաշղթան միւսից բա-
ժանուած է խորը հովիտներով։

Ինչքան շատ սառեց երկիրը, ինչքան աւելի
կծկուեց, այնքան երկարեցին և երկրի կեղեկի ծալ-
քերը, այնքան մեծացան նրա լեռները։ Բայց երկրի
սառելը շարունակւում է և մինչև այժմ սրա համար
էլ սարերը շարունակ աճում են, և մինչեւ որ նրանց ա-
ճումը չդադարի, ջուրը չի կարող ուղղել երկրի
մակերեսոյթի անհարթութիւնները։

XI. Զրի ու հողի միջի կոխը

Զրի ու հողի մէջ կոխւն սկսուել է վաղուց։
Սյս կոխւը մզւում է այն ժամանակից, երբ ե-
րեաց երկրի կեղել։ Առաջ անընդհատ անձրևների
հաթիլները նրանից տաքութիւն էին խլում, բայց

հէնց որ նա բաւականին սառեց, ջրի հեղեղները լըցրին նրան, և ջուրը ծածկեց ամբողջ երկիրը։ Ոչ մի կղզի չէր երեռւմ այն ժամանակ ջրի երեսին։ Դա մէկ միապաղաղ ովկիանոս էր, տաք ջրի միանման շերտ, որի վրայ բարձրանում էին սպիտակ շոգու ահագին քուլաներ։ Երկար ժամանակ երկիրը մերժում էր տեղ տալ ջրին իր մակերեսոյթի վրայ, բայց այժմ այդ տեղը նուաճուած է, և ջուրը այլ ևս ինքը չկամեցաւ նրան զիջել։ Ուղիղ է, տեղ-տեղ ծովը եռում էր, շոգիանում, բայց անընդհատ հեղեղները լրացնում էին ջրի պակասը, և ովկիանոսի խորքը աճում էր։ Մենք երբէք չենք կարող մեզ պատկերացնել անձրեային այն զարհուրելի հեղեղները, որոնք պէտք է երկնքից թափուած լինին երկրի վրայ այդ՝ մեզանից հեռաւոր ժամանակներին։ Երկիրը, կարծես, յաղթուած էր, հեղեղուած և ծածկուել էր ջրի տակ։ Զուրը ամեն կողմ եռում էր, աղմկում և կատաղում։ Ամեն տեղ շրջում էին նրա բարկացկոտ ահագին ալիքները։


Բայց ջուրը շատ վաղ տօնեց իր յաղթանակը երկրի վրայ։ Երկիրը հաւաքում էր իր ոյժերը։ Նա իր կարգով սառում էր։ Շիկացած կենտրոնը փոքր առփոքր սղմւում էր։ Եւ ահա տեղից ցնցուեց երկրի կեղեց։ Կատաղած ալիքների տակից սկսեցին կամաց կամաց դուրս երևալ նրա հսկայական ծալքերը։ Նըրանք կարծես թէ հնազանդում էին այն հզօր ոյժին, որ ծածկուած է մեր մոլորակի կենտրոնում։ Իզուր էր ջուրը հեղեղում նրան անձրեկ հոսանքներով։ Այլ

և անզօր էր ծածկել ամբողջ երկիրը։ Ահագին ովկիանոսի ալիքները կատաղութեամբ խփւում էին առաջին լեռների լանջերին, առաջին ցամաքի ափերին։ Նրանք աշխատում էին կտոր-կտոր անել և սրբել-տանել նրանցից դուրս պրծած քարէ պինդ զանգուածները, բայց լեռները շարունակ մեծանում էին։ Լեռների թիւը աճում էր, երկրի կեղեի ընդարձակ մասերը ուռչում էին, բշտիկներ գոյացնելով, դուրս էին երեռւմ ջրից, կազմելով առաջին ցամաքը, և ծովը պէտք է տեղի տար։

XII. Ծովային դիրքեր, բարացած կենդանիներ եւ բոյսեր։

Այն ժամանակից, երբ ցամաքը դուրս եկաւ ծովի ալիքների միջից, ջուրն սկսեց հեղեղել և փոփոխել երկրի կեղեց։ Հէնց որ ցամաքները դուրս երեւացին, երկրի վրայ թափուած անձրեներից գետեր էլ կազմուեցին։ Սրանք ցամաքներից իրանց հետ տարան այն ամենը, ինչ որ կարող էին տանել նըրանց հոսող ջրերը։ Նրանց աշխատանքը անդադրում է և ծովը, գետերի բերած այդ նիւթից քարի նոր բաղադրութիւններ է կազմակերպում։ Այս նոր բաղադրութիւնները շերտ շերտ ծածկում են հին շերտերը, նորը, ինչպէս ասում են, զիզւում է հնի վրայ, և այդ բոլոր ժայռերը կոչւում են դիրտեր։ Ներկայումս զրեթէ բոլոր հողը ծածկուած է ծովային դիրտերի շերտերով։

Զուրը էլ չեր կարող ամբողջ գետինը ծածկել, բայց փոխարէնը ծածկել է նրան իր շեղակոյտերի շերտով։ Այս շերտը տեղ-տեղ հասնում է մի քանի հարիւր և մինչև անգամ մի քանի հազար ոտնաշափ հաստութեան և ցոյց է տալիս, թէ ինչ երկար ժամանակ էր հարկաւոր, որ կարողանային այսպիսի դիրտեր գոյանալ։



Քարի կտոր, մէջը քարացած ձուկ։

Դիրտերում մարդիկ պատահմամբ գտնում են թաղուած զանազան կենդանիների և բոյսերի մնացորդներ, որոնք առաջ բնակուելիս են եղել մեր մոլորակի վրայ. խխունջների, ձկների, գեռունների, թռչունների և գազանների ոսկրներ և կենդանիների մարմինների ու բոյսերի զանազան ուրիշ պինդ մասեր. այդպիսի մնացորդներ, անյիշատակ ժամանակներից մնալով պինդ դիրտերի ներսը, կրաքարի կամ կաւճի փոխուած, իրանք էլ վաղուց քարացել են, և մենք նրանց անուանում ենք «քարացածներ»։

Ինչպէս յիշեցի, ծովային դիրտերը ծածկում են և այն ցամաքները, որոնց վրայ մենք ապրում ենք։ Մեր ցամաքները, ինչպէս և ամբողջ երկիրը, նոյն-

պէս մի ժամանակ ծովեր էին։ Նրանք միանգամից չեն գոյացել։ Երկրիս կեղակի միանոյն մասերը բազմաթիւ անգամ մէկ գուրս են եկել ջրի տակից, մէկ էլ նորից ընկղմուել ծովի ալիքների մէջ։ Երկրի կեղել ալեկոծուում էր, և այդ ալեկոծութիւնը կամ նրա տատանումը շարունակում է նաև մեր օրերը։ Նրա մի քանի մասերը դանդաղ բարձրանում են, միւսները նոյնպէս դանդաղ իջնում։ Գուցէ և այնտեղ, ուր ապրում ենք մենք, հազար տարուց յետոյ նորից ծով լինի, իսկ ովկիանոսի տեղ նոր ցամաքներ բըսնեն։ Նոյն ոյժը, որ սարեր է կանգնեցնում, դղրդեցնում է և ամբողջ երկրային կեղեր, բայց նրա տատանումները կատարւում է շատ դանդաղ, և հարկաւոր էր բազմաթիւ տարիների դիտողութիւն, որպէսպի այդ բանը նկատէին գիտնական մարդիկ։ Մենք այժմ գիտենք, որ Ռուսիայի ամբողջ հիւսիսը կամաց-կամաց բարձրանում է։ Տեղ-տեղ նա բարձրանում է հարիւր տարում եօթը վերշոկ, բայց առհասարակ բարձրանալը կատարւում է աւելի դանդաղ։

XIII. Երկրի խաւերը, որոնցից սարեր են գոյանում.

Ամենաբարձր սարերի վրայ էլ ծովային դիրտեր են գտնում։ Նշանակում է որ նրանք էլ մի անգամ ովկիանոսի յատակ են եղել, մինչև որ ծալքեր են դիղուել և դառել են սարեր։ Կարելի է ասել, որ լեռների մեծ մասը այդպիսի ծովային դիրտի

ծալքեր են, Նրանք դարսուած են առանձին առանձին շերտերով կամ խաւերով, և յաճախ այդ շերտերը մէկը միւսից զանազանւում է իր գոյնով և բաղադրութեամբ։ Նրանց կարելի է համեմատել շատ անգամ ծալուած գոյնզգոյն թղթի կապուկի հետ, որոնք դարսած են մէկը միւսի վրայ։ Նրանց բաղադրութիւնից և նրանց մէջ գտնուած քարացած իրերից կարելի է լատել, որ նրանք թէպէտ և այժմ դարսած են մէկմէկու վրայ։ բայց կազմուել են զանազան ժամանակ և զանազան եղանակով։

Եւ իրաւ, երբեմն այն խաւի վրայ, ուր ծովային կենդանիների մնացորդներ կան, դրուած է լինում և մի ուրիշ խաւ բոյսերի և ցամաքային կենդանիների մնացորդներով, իսկ յետոյ նորից մի խաւ ծովային կենդանիներով։ Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ առաջին խաւը կազմուել է ծովի յատակում, երկրորդը այն ժամանակ, երբ ծովի յատակը դուրս է երևացել ջրի տակից և ցամաք դառել, իսկ երրորդը՝ երբ ցամաքը նորից ցած է գնացել և նորից ծածկուել ծովով։

Այս գոյնզգոյն խաւերը շատ գեղեցիկ են լինում, երբ նրանց ափերը դուրս են երեսում երկրի տակից քանդուած տեղերի կողքերին։ Պետրոգրադի շրջակայքում Պօպովկա գետակը խորը անցք է դուրս փորել այդպիսի գոյնզգոյն ծովային դիրտերում։ Անցքի պատերը տեղ-տեղ համարեա ուղղահայեաց են։ Բոլորովին ներքեւ, գետի ափին, գետնի տակից տեղ-տեղ դուրս է երեսում կապոյտ կաւի հաստ խաւ,

նրա վրայ գրուած է կանաչ կաւախառն աւագի մի շերտ, յետոյ գալիս է բոլորովին սև շերտ մի առանձին «այրուող թերթաքար» (сланецъ), իսկ վերկից մի ամբողջ շարք գորշագոյն, կանաչ, կարմիր ու դեղին կրաքարերի խաւեր։

Ինչքան շատ են ծալքերը, այնքան խաւերը ծուռն ու մուռն են, այնքան սարերը զանազանաձե են և աւելի գեղեցիկ։ Մեծ լեռներում, ինչպէս Ալպերում կամ մեզ մօտ կովկասում, ծալքերը յաճախ խառնում են իրար, նրանք շուռ են գալիս մէկը միւսի վրայ, և այն խաւերը, որոնք չեն կարողանում շատ ուժեղ կերպով ծոռւել, ճղբւում են և տեղահան լինում։ Խաւերի թեքութիւնները և ծալքերը այդ դէպքում հիւսւում են սարսափելի անկարգութեամբ։ Նայելով նրանց, ակամայից զարմանում ես այն զարհուրելի ուժի վրայ, որ կարողացել է շարժել այս բոլոր շերտաւոր հողերը, ծոելով ծալքեր առաջացրել, կոտրտել, ջարդել և խառնել մի անկերպարան զանգուածի։

XIV. Թէ ինչպէս բոյսերի կուտակումը բարածուխի է փոխւում երկրի վրայ.

Երկրի բոլոր շեղակոյտներում կամ խաւերում կենդանիների և բոյսերի մնացորդները միակերպ լաւ չեն պահպանւում։ Օրինակ, փխրուն աւագի մէջ, որի միջով ջուրն ու օդը հեշտ է թափանցում, այս մնացորդները շատ հազիւ են պահպանւում։ Ամեն բան,

ինչ որ ընկնում է այդպիսի աւագի մէջ, փոխուում ու քայքայւում է նրանում, ինչպէս եթէ նա մնար բաց օդի մէջ: Մեռած բոյսերն ու կենդանիները ընեխում են», քայքայւում, ջրով հեղեղւում, և շատ շուտ նրանց հետքն էլ չի մնում: Իսկ ընդհակառակ, ինչքան դիրտը կարծր է, այնքան լաւ են պահուում նրանում այդ մնացորդները: Ահա թէ ինչու այնքան շատ քարացածներ են պատահում զանազան պինդ կրաքարերի մէջ, որոնք գոյանում են խորը ծովերի յատակին: Երբեմն կրաքարերի հաստ շերտեր բազկացած են լինում միմիայն զանազան կենդանիների խխունջներից:

Ճիշտ այնպէս, ինչպէս կենդանիների պինդ մասերը, ջրի տակ կարող են կիտուել և բոյսերի մնացորդներ: Հէնց նրանցից էլ փոքր առ փոքր գոյանում է այն կարծր, ծանր, աւելի շուտով քարին նմանուող ածուխը, որով մեծ քաղաքներում վառարաններ են տաքացնում: Նրանցով են տաքացնում նոյնպէս գործարանների և արհեստանոցների հնոցները, շոգենաւերի և երկաթուղիների կաթսաները: Նրանից է ստացւում վառելու գաղը և ուրիշ շատ նիւթեր:

Ինչքան շատ քարածուխ է ստացւում մի երկրում, այնքան հարուստ է այն երկիրը: Եւ շատ հասկանալի է. քարածուխը տալիս է երկրի բնակիչներին և տաքութիւն, և լոյս, և էժան ոյժ գործարանների համար: Եւրոպական երկրներից ոչ մինը չեր կարող գոյութիւն ունենալ առանց նրան:

Իւրաքանչիւր տարի այրում են տասնեակ միլիոն փուլթ քարածուխ, բայց այս թանկագին հանքի պաշարը այնքան մեծ է երկրի մէջ, որ դեռ շատ երկար ժամանակ բաւական է նրանց: Երկիրը կարծէք ինայել է մեզ համար քարածուխի ձեւի տակ այն բոյսերը, որոնք շատ վաղուց, շատ հազար տարիների ընթացքում ծածկել են իր մակերեսոյթը: Սակայն, քարածուխ պատրաստուելը շարունակւում է և մեր օրերը:

Ումեն մէկ մեծ գետ, անցնելով անտառի միջով, տանում է իր հետ դէպի ծով բազմաթիւ ամեն տեսակ անտառային աղբ: Գարնանը գետի ջուրն ափերից դուրս է գալիս և թափւում անտառում: Նա տանում է անտառից այն ամենը, ինչոր պատահում է ճանապարհին, և ինչ որ պահում է ջրում: Ծառերի թափուած ճիւղեր, ոստեր և մինչև իսկ հէնց ծառեր, որոնք գլորուած են լինում քամուց կամ արմատից խլուած, – այս բոլորը գնում է գետի հետ և կամաց կամաց լողում հոսանքում: Երբեմն այսպիսի աղբից կազմւում են ամբողջ լողացող կղզիներ: Աղբը կանգ է առնում ծանծաղուտում, վրէն արագութեամբ առում է մամուռ և խոտ և կարծէք իսկական կղզի է գոյանում, թարմ կանաչով ծածկուած: Բայց այս կղզիներն էլ հոսանքի ուժով պոկւում են տեղից և տարւում դէպի ծով:

Սիբիրի բոլոր մեծ գետերի բերանները շատ տասնեակ վերստեր լցուած են այսպիսի աղբով՝ ծառը, ջուր ծծելով, չի կարողանում կանգուն մնալ:

նրա վրայ, և խորասուզւում է յատակը: Ծառը ընկ-
նում է ծառի վրայ: Տարէցտարի յատակում հաւաք-
ւում է ճիւղերի, ոստերի, կեղեների և ծառերի ու-
րիշ կտորտանքների ամբողջ դէղեր: Նրանց մի մասն
արդէն նեխուած է լինում, իսկ միւսները դեռ պահ-
պանում են իրանց ձեր, նախկին տեսքը:

Երևակայեցէք, որ այսպիսի ծառերի տեղ, որը
հաւաքուած է լինում գարերի ընթացքում, երբեկցէ
ծածկուի աւազով, կաւով և գետի ու ծովի դիրտերով:
Այդ հաստ շեղջակոյտի տակ, ուր օդ չի կարողանում
թափանցել, ծառը հետզհետէ փոխւում է: Փխրուն
փայտանիւթը վերեկց ձնշող շեղջակոյտի ծան-
րութեան տակ նստում է, կուչ է գալի և դառ-
նում կարծր շերտ, իսկ ծառը փոքր առ փոքր հա-
մարեա նոյն դրութիւնն է ստանում, ինչ որ լինում
է երբ տաքացնում ենք նրան առանց օդի: Ծառը,
ինչպէս ասում են, «ածխանում է» և փոքր առ փոքր
փոխւում քարածուխի:

XV. Թէ ինչպէս է ծառը այրում առանց օդի, ձահ-
նային գազ:

Փայտը տաքանալով օդի մէջ այրում է. օդի
մի մասը միանում է փայտի հետ և փայտն այր-
ւում է: Բայց երբ փայտը տաքանում է առանց օ-
դի, նրա մեծ մասը չի այրում, այլ մնում է իբրև
ածուխ:

Բացի ածուխից, այսպիսի այրման ժամանակ
փայտից ստացւում է ուրիշ շատ տեսակ հեղուկ
նիւթեր և գազեր:

«Գազ» կոչւում է այն ամենը, ինչ որ օդի նը-
ման է: Զանազան տեսակ բազմաթիւ գազեր կան,
և ինչքան էլ նրանք առաջին հայեացքից նման են
մէկը միւսը, բայց նրանցից իւրաքանչիւրը զանա-
զանուում է միւսից որևէ առանձին յատկութիւննե-
րով:

Օրինակ, երբ օդում ածուխ է այրում, ածու-
խից և օդի մի մասից ստացւում է «ածխաթթու»
գազ, որը թէպէտ ոչ մի հոտ կամ համ չունի, բայց
շատ վնասակար է առողջութեան համար: Երբ ձուն
հոտում է, գոյանում է հոտած և նոյնպէս վնասա-
կար «ծծմբաջրածնային» գազ: Փողոցի լապտերնե-
րում վառւում է լուսատու գազ, բայց այդ գազը
մաքուր գազ չէ, այլ զանազան գազերի խառնուրդ:
Հէնց այս խառնուրդն է ստացւում, երբ փայտը ամ-
բողջովին չի այրում և երբ այրում է առանց օդի:

Նրա զանազան գազերի մէջ, գուցէ ամենահե-
տաքրքրականը այն գազն է, որ միշտ գոյանում է ջրի
տակ ճահճների յատակում փտող բոյսերից: Նրան
անուանում ենք «ճահճային գազ»: Փորձեցէք ամա-
ռուայ վերջերին մի երկար ձող կոխել ճահճի յատակի
մօտ, որ համարեա մամուռով է լինում ծածկուած:
Կտեսնէք, որ յատակից ջրի երեսին դուրս կթռ-
չեն մի քանի ինչ-որ գազի բշտիկներ: Ճշմա-
րիտ է, մաքուր «ճահճային գազ» չի լինի այն, մէ-

Ջը կլինեն և՝ ածխաթթու գազ, և՝ հոտած «ծծմբացրածնային» գազ, և մի քանի ուրիշ գազեր, բայց այնուամենայնիւ գազի գլխաւոր մասը, բշտիկների մէջ, բաղկացած կլինի «ճահճային» գազից:

Մաքուր ճահճային գազը օդի մէջ վառւում է մեղմ կերպով, բաւական լուսաւոր բոցով. բայց եթէ վաղօրօք նրա հետ օդ խառնենք և յետոյ վառենք այդպիսի խառնուրդը, նա բռնկում է ուժեղ պայթիւնով:

Ամեն մէկ քարածուխ շատ ճեղքեր ունի և հէնց նրանց մէջ է պահում այն ճահճային գազը, որ գոյանում է բոյսերի մնացորդների՝ քարածուխի փոխուելու ժամանակ: Դրանից էլ քարածխէ հանքահորերում, ածուխը ջարդելիս փոքր առ փոքր հաւաքում է շատ «ճահճային» գազ: Ածուխից դուրս գալով նա խառնում է ածխահորերի օդի հետ, և այդ ժամանակ շատ վտանգաւոր է հորերում կը բակ վառելը առանց մի քանի նախազգուշութիւնների. ճահճային գազի խառնուրդը օդի հետ, լցուելով հորերում, կարող է յանկարծ բռնկել: Այդպիսով պատահում են զարհուրելի պայթիւններ, որոնցից դըղրդում է գետինը, ցրիւ են գալիս ստորերկրեայ անցքերի կամարները և իրանց կտորտանքով լցնում ածխահորերում աշխատող բանուրներին:

XVI. Հողածուխ (Տօրֆն)

Երկրիս բոլոր քարածուխը փայտից չի գոյացել: Նոյնքան յաճախ նա գոյանում է խոտաբոյսերից:

Հիւսիսային խոնաւ երկրներում, և մեզ մօտ էլ, Պետրոգրադի մօտերքը, ուր կաւային կամ քարէ գետինը ջուր չի անցկացնում իր միջից, անտառային մեծ լճեր է կազմում: Նրանցում քարածուխի մէջ հետզհետէ կազմւում է մամուռ, որ լցնում է լիճը: Ինչքան էլ այս օտարօտի թուայ ձեզ առաջին հայեացքից, բայց և այնպէս փափուկ, փիրուն մամուռից վերջի վերջոյ ստացւում է պինդ քարածուխ:

Անտառային լճի ափերը շատ շուտով ծածկւում են մամուռով: Նա շրջապատում է լիճը ամեն կողմից լայն բաց կանաչժապաւէնով, և այդ ժամանակ ջրի հանդարտ մակերեսոյթը, որի մէջ անդրադառնում է կապոյտ երկինքը, մեզ թւում է իրեւ մի մեծ հայելի եզերուած կանաչ թաւիշէ գեղեցիկ շրջանակով: Այս ժապաւէնը հետզհետէ աճում է, ընդարձակւում: Ափից անցնում է ջրին, և քիչ-քիչ ամբողջ լիճը ծածկում է մամուռի շերտով: Բայց այդ շերտի տակ ջուր կայ: Մամուռը տակով չի անում, այլ մնում է ջրի երեսին, շնորհիւ այն բանի, որ նա կազմում է մի ամբողջ շերտ, որի ծայրերը հասնում են ափերին: Եթէ այս ծայրերը կտրտում են, այն ժամանակ մամուռը խորասուցւում է ջրի մէջ: Տարէց տարի այս շերտը հաստանում է, վերկից աճում է միշտ նոր մամուռ.—թարմ, ուժեղ, իսկ ներքեցից մամուռը մեռնում է: Փոքր առ փոքր նա հասնում է այնպիսի հաստութեան, որ լցնում է ամբողջ լիճը մինչև նրա յատակը:

Այսպէս են գոյանում մամուռապատ ճահճնե-

ըլք: Նրանք բոլորն էլ մի ժամանակ լճեր են եղել, իսկ այժմ ջրի փոխարէն լցուած են մամուռով: Ջուրը մենք չենք տեսնում, բայց նա գոյութիւն ունի մամուռի հիւսուած ճիւղերի մէջ: Ջուրը մնում է նրա մէջ ինչպէս սպունգի մէջ, և եթէ այդպիսի մամուռի մի կտոր ձեռքով հուալ տանք՝ կարող ենք միջից ջուր հանել: Նա ջուրը ծծում է իր մէջ, և անձրեի ժամանակ այդպիսի ճահիճներ յանախ ուռչում են, մակերեսոյթը բշտիկներով ուռչում է, և այդ ժամանակ կարելի է ասել, ոչ թէ ջուրը, այլ «մամուռն է դուրս գալիս ափերից»:

Երբ անտառի լիճը փոխւում է մամուռապատ ճահճի, այլ ևս մամուռի շերտը չի կարող հաստանալ: Նրան խանգարում է յատակը, իսկ միւս կողմից վերեկց աճում է միշտ նորանոր մամուռ, և ահա ներքի, վաղուց արդէն մեռած գունատուած մամուռը, որի վրայ ճնշում է ամբողջ վերև գտնուած մասը փոքր առփոքր փոխւում է աւելի կարծր զանգուածի, փոխւում «հողածուխի» շերտի: Արա համար էլ հին մամուռապատ ճահիճները անուանում են «հողածխային» ճահիճներ, կամ ուղղակի «հողածխահանք»: Ինչքան ճահիճը հին է, այնքան հողածուխի շերտը հաստ է լինում:

Երբեմն այս շերտը հասնում է չորս, հինգ սաժէն և մինչև անգամ աւելի հաստութեան:

Հին վաղուց արդէն չորացրած, ճահիճներից կրտտում են հողածուխի մեծ մեծ կառներ, չորացնում են ու նրանով վառարանները տաքացում: Նա

շատ է տաքացնում և կարող է փոխարինել փայտին: Պետրոգրադ հողածուխը բերում են ֆինլեանդիայից: Ֆինլեանդիայում շատ հողածխահանքեր կան: Նրանք տեղ տեղ ձգւում են հէնց երկաթուղու գծի ուղղութեամբ. շոգեկառքի լուսամուտից կարելի է տեսնել անտառների մէջէմէջ ընդարձակ դաշտավայրի վրայ բազմաթիւ փոքր փոսեր, որոնց միջից գիւղացիք հանում են հողածուխ: Այսպիսի փոսերի ափելին դիզուած են արդէն հանուած հողածխի սև կամ գորշ կտորտանքի կոյտեր, արևի տակ չորացնելու համար: Նրանց մօտ երեսում են մի քանի տնակներ բանուորների համար, ծածկեր և սրահներ հողածուխի համար և այնուհետև ճանապարհ դէպի մօտակայ կայարանը: Այս է հողածուխի մշակութիւնը:

Հողածուխը կարեոր է մեզ դարձեալ այն պատճառով, որ նրա մէջ զանազան առարկաներ աւելի երկար են պահնում:

Հէնց որ հողածուխի ճահճի մէջ ընկնում է մօտը բսած մի ծառ, կամ պատահմամբ ընկնում մի կենդանի—հողածուխը պահպանում է իր մէջ և փայտէ բունը և՛ կենդանու ոսկըները հարիւրաւոր, գուցէ և հազարաւոր տարիներ ամբողջութեամբ և նոյնութեամբ: Շատ հին հողածխահանքեր կան, և հէնց նրանց մէջ շատ այդպիսի գիւտեր են անում: Նրանցով կարելի է լինում որոշել ճահճի անցեալ կեանքը, թէ ինչպիսի անտառ է եղել նրա շուրջը շատ գարեր առաջ, ինչ գաղաններ են թափառել այդ

անտառում, ի՞նչ թուշուններ են հիւսել այդտեղ իրանց բները:


Մի անգամ հողածխահանքում գտան մի հին զինուոր ձի հեծած և ամբողջապէս զրահաւորուած: Ի հարկէ թէ նրա և թէ ձիու ամբողջ միսը վաղուց արդէն նեխուել էր, բայց կմաղքն ու զէնքերը, մի քանի հարիւր տարի մնալով հողածխի մէջ, գեղեցիկ կերպով պահպանուել էին: Դժբաղդ զինուորը, երկի, խեղտուել էր ճահճի մէջ, երբ փորձելիս է եղել ձիով անցնել նրա միջով: Ծանը վահանն ու սաղաւարտը խանգարել են նրան ճահճից դուրս գալու և խեղդել են խեղճին:

Մի ուրիշ հողածխում գրեթէ մի սաժէն խորութեան մէջ, գտել են հին հոռվմէական կամուրջ: Այս կամուրջով ճահճի վրայից մէկ ինչոր ճանապարհ է եղել անցնելիս: Այժմ հետքն էլ չի մնացել: Բայց ինքը կամուրջը, որ անշուշտ երկար ժամանակ նորոգութեան չի ենթարկուել, խորտակուելով ճահճի մէջ՝ մնացել է մինչև մեր օրերը:

XVII. Թէ ինչպէս հողածուխը փոխում է քարածուխի, իսկ ածուխը ուրուաֆարի (գրաֆիտ) եւ աղամանի:

Հին հողածխահանքերը կարող են ժամանակի ընթացքում ոչ միայն ցամաքել, այլ մինչև անգամ վելմից շեղջակոյտերով ծածկուել: Այնտեղ, ուր ճա-

հիճ է եղել, այժմ նորից անտառ է աճել, իսկ գետնի տակ մի քիչ խորը տեղ, ինչպէս ճահճի վերջին հետք, գտնում է հողածխի հաստ շերտ: Հաղարաւոր տարիներ կանցնեն, և այդ հողածուխը փոքրառփոքը կփոխուի նոյնպիսի քարածուխի, ինչպիսին գոյանում է ծառերի կտորտանքի կոյտերից ջրի տակ:



Քարածուխի կտորի վրայ գրոշմուած տերեւ

Քարածուխի մէջ պատահած բոյսերի մնացորդներով, ինչպէս ծովային դիրտերի քարացած նիւթերով, յաճախ կարելի է լինում որոշել, թէ ինչպիսի բոյսերից է այն գոյացել, խոտի թէ ծառի տեսակներից:

Ինչքան հին է քարածուխը, այնքան կարծր է, այնքան աւելի նման է քարին: Նրա մէջ քիչ են լինում զանազան խառնուրդներ մնացած և աւելի շատ մաքուր ածուխ է պարունակում: Արդէն քարածուխի գոյնից կարելի է որոշել մօտաւորապէս, թէ որ

ածուխն է աւելի հին: Թանի հին է՝ այնքան աւելի սկ է: Իսկ ընդ հակառակ, այն ածուխը, որ շատ ժամանակ չէ ինչ որ կազմուել է, գորշ, խարտեաշ գոյն ունի:

Վառելու գաղ ձեռք բերելու ժամանակ քարածուխը տաքացնում են մեծ հնոցներում առանց օդի: Այդպիսով աւելի մաքուր ածուխ է մնում, որ «կօկս» է կոչւում: Միևնոյն ձեռվ կարող է ածուխը տաքանալ և բնութեան մէջ, և այդ ժամանակ ածուխը շատ կարեոր փոփոխութեան է ենթարկւում: Նրանից ստացւում է բաւական փափուկ մի տեսակ զանգուած, նոյնպիսի փայլուն գորշ գոյնի, ինչպէս և կօկսը, որը մենք անուանում ենք ուրուաքար: Այդ միևնոյն ուրուաքարն է, որից սովորաբար շինում են մատիտները. գուցէ և գետնի մէջ եղած ամբողջ ուրուաքարը քարածուխից չէ կազմուել, բայց մենք գիտենք, որ գոնէ մի մասը առաջ է եկել այդ եղանակով: Ուրուաքարը մաքուր ածուխ է, միայն սաստիկ տաքութեան ազդեցութիւնից յատկութիւնը փոխուած:

Ինչքան էլ օտարօտի լինի ածուխի այդպիսի փոփոխութիւնը, բայց աւելի զարմանալի է նրա մի ուրիշ փոփոխութիւնը: Անշուշտ լսել էք աղամանդների մասին, այն թանկագին քարերի, որոնց նստացնում են մատանիներում, քորոցներում, օղերում և որոնցից շինում են ամեն տեսակ զարդարանքներ: Աղամանդ կոչւում է թրաշած ալմասը, մի թանկագին քար, որ տեղ տեղ դտնւում է գետնի մէջ կամ մի

քանի կարծը ժայռերի խորքում: Ուրուաքարի և ածուխի մէջ մենք կարող էինք մի քանի նմանութիւն գտնել, թէկուզ հէնց նրանց մութը գոյնը կամ թէ այն, որ երկուսով էլ գրւում է թղթի վրայ, բայց ալմասն արդէն ամենսին նման չէ ածուխին: Մինչդեռ նա էլ գոյանում է ածուխից: Նրան աւելի շուտ ապակու հետ կարելի է համեմատել: Ալմասն յաճախ թափանցիկ է լինում ինչպէս ապակին, ածուխից, ապակուց և ուրիշ բոլոր մարմիններից աւելի պինդ է:

Որպէսզի աւելի հասկանալի լինի ածուխի այդպիսի կերպարանափոխութիւնը, կարող էք մի շատ հետաքրքրական փորձ կատարել ծծումբով: Ծծումըն էլ փոխում է իր ձեռն ու յատկութիւնները, բայց միայն աւելի հեշտ, քան ածուխը: Մի կտոր կամ մի ձողիկ ծծումք ամեն գեղատանը կարելի է գնել: Վերցրէք մի սափոր սառը ջրով լիքը, ծծումքը զրէք մի փոքրիկ կաւէ քրեղանի մէջ տաք վառարանի վրայ: Ծծումքը քիչ-քիչ կհալուի, կդառնայ հեղուկ: Եթէ շարունակէք տաքացնել, կտեսնէք, որ հեղուկ ու հալուած ծծումքը նորից կթանձրանայ: Գոյնը կսկսի մուգանալ, գորշ դառնալ, կարծէք թէ այրուեց: Բայց եթէ աւելի սաստիկ տաքացնէք, նորից հեղուկ կը դառնայ: Եւ այժմ արդէն ինքն իրան կարող է այրուել օդի մէջ, Որպէսզի այդ չլինի, քրեղանը խուփով ծածկեցէք: Յետոյ վերցրէք վառարանից և լցրէք սասցաջրի մէջ, որ ինչքան կարելի է շուտ սառչի: Այն ժամանակ կստանաք արդէն ոչ թէ գեղին, ձեզ ծանօթ ծծումքը, այլ բոլորովին մի առանձին, փա-

փուկ գորշ, կիսաթափանց բան, որ ձեռքի մէջ տրոր-
ւում է մեղրամոմի պէս:

Բայց ինչ պատահեց ծծումը հետ: Ծծումը
ծծումք մնաց, միայն սաստիկ տաքանալուց և արագ
սառչելուց փոխեց իր ձեռ ու յատկութիւնները:

Միառժամանակ թողէք այդպէս մնայ փափուկ
ծծումքը: Եւ կը տեսնէք, որ նորից մուգացաւ,
փայլեց և հետզհետէ ինքն իրան փոխուեց սովորա-
կան դեղին փխրուն ծծումքի: Այս պատճառով էլ
բնութեան մէջ երբէք չէք պատահի փափուկ գորշ
ծծումքի, այլ միայն դեղին, փխրուն ձեի:

Թէպէտե ալմասը ինքն իրան ածուխի չի փոխ-
ւում, բայց եթէ նրան ծեծելով փոշիացնենք և այդ
փոշին սաստիկ շիկացնենք, նա էլ կփոխի իր ձեր.
կսեանայ և կփափկի, ինչպէս ածուխ:

XVIII. Ինչպէս է ածուխից ալմաս սացուել:

Ալմասը ամենաթանգ քարերից մէկն է: Զար-
մանալի չէ, որ մարդիկ վաղուց աշխատում են մի.
ջոց գտնել էժանագին ածուխը թանկագին ալմասի
փոխելու: Բայց մինչև այժմ նրանք հազիւ կարողա-
ցան ածուխից միայն խիստ մանր, մանրիկ, ոչ մի
արժեք չունեցող, ալմասի կտորներ ստանալ: Մարդ-
կանց չի յաջողում այն անել, ինչ որ վաղուց արել
է բնութիւնը: Բայց, ուսումնասիրելով բնութիւնը,
մենք սովորում ենք օգուտ քաղել և նրա ոյժերից:

Շատ կարելի է որ մօտ ժամանակներում մենք կա-
րող կլինինք ածուխը խոշոր ալմասի էլ փոխարկել:

Դուք գիտէք, որ ջրի մէջ լուծւում են զանա-
զան նիւթեր: Երբ ջուրը ցամաքում է, այդ նիւթե-
րը նորից բաժանւում են նրանից բիւրեղի ձեռվ:
Գիտէք նոյնպէս, որ շատ նիւթեր տաք ջրի մէջ ա-
ւելի լաւ և աւելի շատ են լուծւում, քան սառը ջրի
մէջ: Եթէ այդ նիւթերի տաք լուծուածքը թունդ է,
սառելիս նրանց մի մասը բաժանվում է ջրից իբրև
բիւրեղ: Սակայն ջրի մէջ ամեն նիւթ չէ լուծւում:
Նրանցից շատերը, օրինակ, ապակին, կուպրը և ու-
րիշները, բոլորովին չեն լուծւում ջրի մէջ, բայց
լուծւում են ուրիշ որևէ հեղանիւթի մէջ: Վերցրէք
մի կտոր կուպր, որի ջրի մէջ չի լուծւում, և զցե-
ցէք բուսական ձէթի մէջ. կուպրը լուծւում է նրա-
նում:

Զկայ մի այնպիսի հեղուկ, որի մէջ չլուծուի
այս կամ այն պինդ նիւթը, Մի քանիսը լուծւում
են այս հեղուկների մէջ, միւսները՝ միւս հեղուկ-
ների մէջ: Եթէ մենք կարողանայինք գտնել մի այն-
պիսի հեղանիւթ, որի մէջ հեշտութեամբ լուծուէր
ածուխը և կարողանայինք հեշտութեամբ շոգիացնել:
Լուծուածքի շոգիանալու ժամանակ ոչ թէ սովորա-
կան ածուխ կստանայինք, այլ ածուխի կանոնաւոր
բիւրեղներ: Այդ գէպքում գժուար չէր լինի ալմաս
ստանալ: Բայց բանն էլ հէնց դրա մէջն է. որ ա-
ծուխը սովորական հեղուկներից ոչ մէկի մէջ չի
լուծւում: Սակայն կարող ենք լուծել հալուած եր-

կաթի մէջ: Երկաթը պինդ մարմին է, բայց եթէ նրան շիկացնենք, նա կփափկի, կհալուի, հեղուկ կը դառնայ: Եւ ահա այս տաք, փայլվող հեղուկի մէջ հալուում է ածուխը:

Նրա սառչելու ժամանակ, երբ երկաթը նորից բարձրանում է և պնդանում, ածուխի մի մասը մի- անում է երկաթի հետ: Փափուկ երկաթը աւելի է փափկում և փշուում: Այն ժամանակ նա կոչում է «չուգուն» և «պողպատ»: Այն բոլոր երկաթը, որ դուք ինքներդ գործ էք զնում, դիցուք այն դանակը կամ պատառաքաղը, որոնցով ամեն օր կերակուր էք կտրում և վերցնում:—մէջը ածուխ է պարունակում:

Իսկ ածուխի միւս մասը երկաթի սառելիս գո- յացնում է նրա ներսը ուրուաքարի և ալմասի բազմա- թիւ մանրիկ բիւրեղիկներ: Ինչքան շատ է հալուած երկաթը և ինչքան դանդաղ է սառում, այնքան խո- շոր են լինում ալմասի բիւրեղները:

Երկրագնդի սառելու ժամանակ հարիւրաւոր տարիների ընթացքում փոքրառփոքր սառել է ահա- գին քանակութեամբ հալուած երկաթ: Նրա մէջ լուծուած է եղել մաքուր ածուխ: Այս ածուխի մի մասը լուծուածքից բաժանուել է իբրև ալմաս: Օզն ու ջուրը ժամանակի ընթացքում փոխել է և քայ- քայել երկաթը, իսկ ալմասները մնացել են անփո- փոխ: Նրանք պահպանուել են մինչև մեր օրերը նոյնքան մաքուր և թափանցիկ, ինչպէս որ էին հա- զարաւոր գարեր առաջ:

ХІХ. Նիւթերի փոփոխութիւնը երկրի վրայ, պարզ մարմիններ եւ քրուածներ:

Թէ բոյսերը և թէ կենդանիները երկրի վրայ երկացել են համեմատաբար աւելի ուշ ժամանակ: Մինչեւ որ երկիրը տաք էր և ջուրը դեռ չէր սառել ծովերում, նրա վրայ կեանք չկար, իսկ ինըը եր- կիրը գոյութիւն ունէր: Նրա վրայ կատարւում էին արագ փոփոխութիւններ, որոնք կատարւում են և ներկայումս, թէպէս աւելի դանդաղ կերպով:

Քանի որ երկրագունդը չէր սառել, շարունակ փոփոխութիւն էր տեղի ունենում այն բոլոր նիւ- թերի, որոնցից բաղկացած է նա: Նրանցից շատերը չեն տանում սաստիկ տաքութիւն, և այն նիւթերի մեծ մասը, որ դուք այժմ տեսնում էք երկրիս վրայ, գոյութիւն ունէին նրա վրայ հալուած դրութեան մէջ: Մենք չգիտենք թէ այն ժամանակ ինչքան էր երկրի տաքութիւնը բայց կարող ենք ասել, որ ըս- կզբում նրա վրայ փոխանակ անթիւ անհամար խիստ բազմազան նիւթերի, կային միայն այնպիսիները, որոնք չէին կարող լուծուել, այսինքն բաժանուել ուրիշ որևէ նիւթերի: Այսպիսի չլուծուող նիւթերը կոչում են «պարզ մարմիններ»: Դրանց թիւը քիչ է: Դրանցից մի քանիսը ձեզ ծանօթ են, օրինակ՝ ծծումբը, մաքուր ածուխը: Պարզ մարմիններին են վերաբերում և բոլոր ձեզ ծանօթ մեաազները, —եր- կաթ, արձիճ, ցինկ, պղինձ, արծաթ, ոսկի, սնդիկ և շատ ուրիշներ:

Պինդ հողի մեծ մասը մետաղներից է բաղկացած։ Այդ բոլոր մետաղները սկզբում ազատ էին, այն է, միացած չեխն ուրիշ որևէ մարմինների հետ, իւրաքանչիւրն ինքն իրան։ Բայց անցան երկար դարեր, երկիրը աստիճանաբար սառեց, աստիճանաբար էլ երկրի երեսին և խորքում կատարուեց պարզ մարմինների միաւորութիւնը միմեանց հետ։ Միանալով միմեանց հետ, սուր կերպով փոխուեց նրանց ձեն ու յատկութիւնը։ Երկու կամ մի քանի պարզ մարմինների միաւորութիւնից առաջ եկաւ մի բոլորովին նոր բարդ նիւթ, և մենք կարող ենք իմանալ, թէ որ պարզ մարմիններից է այդ նիւթը բարդուել, եթէ նորից լուծենք կամ բաժանենք նրան այդ մարմինների։

Սովորական ջուրը երկու գաղերի միաւորութիւն է։ Կարելի է երկու գաղ միացնել, բայց այդպիսով դեռ ջուր չի ստացուի. կստացուի միայն երկու գաղերի խառնուրդ։ Որպէս զի նրանցից ջուր ստացուի, պէտք է նրանք միաւորուեն միմեանց հետ։ Այն ժամանակ դուք կունենաք արդէն ոչ թէ երկու գաղերի պարզ խառնուրդ, այլ բոլորովին նոր նիւթ, մի հեղուկ իր սեպհական յատկութիւններով, — մի նիւթ, որին մենք ամենքս «ջուր» ենք անուանում։

Մի քանի մարմիններ հեշտ են միանում միմեանց հետ, միւսները գժուար կամ մինչև իսկ ամեննեին չեն միանում։ Շատ քիչ պարզ մարմիններ կարող են միանալ գրեթէ բոլոր միւս մարմինների հետ։ Այսպիսի մարմիններին պատկանում է մի գաղ, որից բաղկացած է սովո-

րական օդի մի հինգերորդ մասը։ Այս գաղը կոչւում է «թթուածին»։ Թթուածնի միաւորութիւնը ուրիշ մարմնի հետ կոչւում է «թթուացում», իսկ այն նոր մարմինը, որ գոյանում է գրանից, «թթուած»։ Թաց երկաթը ծածկում էր երկաթի գեղին «թըթուածով», որ կոչւում է ժանդ։ Ածխաթթու գաղը ածուխի թթուածն է։ Կիրը — մի առանձին մետաղի թթուածն է։ Եթէ մինչև կարմրելը տաքացնէք պըղնձէ մի զրամ և յետոյ սառցնէք, նա կծածկուի պղնձի սև թթուածով. պղինձը նրա երեսին կթթուի, այսինքն՝ կմիանայ թթուածնի հետ։ Ճիշտ այդպէս էլ ծծումքը այրելիս ստացում է մի առանձին ծծմբային գաղ, ծծումքի թթուած։ Մի խօսքով, գրեթէ ամեն մէկ պարզ մարմին իր թթուածը կամ իր թթուածներն ունի։

Մետաղները թթուելով, կորցնում են իրանց սովորական տեսքը և փայլը։ Մետաղներից նրանք փոխարկում են փայլուն նիւթի, որ աւելի շուտով հողի նման է լինում։ Սրա համար էլ մետաղների թթուածը յաճախ անուանում են «հողային» նիւթեր։ Ժանգը գեղին հսղային նիւթ է, որ գոյանում է երկաթի թթուելիս։ Կարելի էր կարծել, որ մետաղները երկրի սառչելիս ամենից առաջ միաւորուել են թթուածնի հետ։ Նրանք փոխարկուել են այդպիսի հողային նիւթերի։ Գրեթէ նրանք ամենքը աւելի հեշտ միաւորում են թթուածնի, քան ուրիշ մարմինների հետ։ Ճիշտ այդ ձեռվ էլ թթուել են մնա-

ցեալ բոլոր պարզ մարմինները: Միայն մի քանիսը
նրանցից մնացել են անփոփոխ:

XX. Զանազան հանդերի մետաղների մասին:

Նիւթերի թթուացումով չվերջացաւ նրանց փոխարկութիւնը երկրի վրայ: Թթուածներից շատերը այնուհետև սկսան միաւորուիլ մէկ-մէկու հետ: Ինչպէս առաջ պարզ մարմինները միաւորում էին թթուածնի հետ, այնպէս էլ այժմ թթուածներն էին միաւորում միմեանց հետ: Այսպէս են գոյացել զանազան տեսակ հանքերը, իսկ նրանց խառնուրդից, ինչպէս գիտէք, գոյացել են, վերջապէս, և երկրի կեղեկի առաջն մետաղները:

Հանքերի մէջ մետաղները չեն երեսում, բայց կարող ենք նրանց գոյութիւնն իմանալ կաւի, աւազի, կրաքարի, ամեն մի քարի մէջ, — մի խօսքով, համարեա ամեն բանի մէջ, ինչից որ կազմուած է երկրիս կեղերը: Ճշմարիտ է, այս անելը միշտ հեշտ չէ: յաճախ մետաղը շատ սերտ կերպով է լինում միացած ուրիշ մարմինների հետ: Բայց շատ անգամ մետաղը ջոկելը ոչ մի աշխատանք չի պահանջում: Երբեմն շատ հեշտութեամբ մի մետաղ դուրս է մըղւում միւսի միջոցով: Դեղատանը գնեցէք մի քիչ արձիմ քացախաթթւուտի հետ միացած, որ կոչւում է «արձաշաքար»: Այս սպիտակ նիւթը արտաքին տեսքով աղի նման է և ամենեին նման չէ մետաղէ ար-

ճըճին կամ քացախին: Բայց նիւթերի միաւորութիւնների և լուծուելու ժամանակ դրանից աւելի դարմանալի փոխակերպութիւններ են կատարւում: այս նմանութիւն չունենալը ձեզ անհաւանական չը պէտք է թուայ: Արձիմ յայտնագործելը արձնէ շաքարի մէջ կարելի է շատ հասարակ կերպով: կարելի է նրա միջից դուրս հանել մի քանի ուրիշ մետաղներով, օրինակ ցինկով:

Մի քիչ արձնէ շաքար լուծեցէք մի բաժակ ջըրում, բաժակի ծայրին դրէք մի ձող, որից թելով կապեցէք մի կտոր ցինկ: Թող այդ կտորը կախուած մնայ արձնէ շաքարի լուծուածքում: Թողէք բաժակը այդպէս բոլորովին հանգիստ մնայ: Մի քանի ժամից յետոյ շատ կզարմանաք ձեր տեսածի վրայ: Ցինկի կտորի փոխարէն կտեսնէք թելի վրայ բաւական մեծ ու խիստ գեղեցիկ թփիկ, բաղկացած բազմաթիւ բարակ փայլուն թերթիկներից: Նրանք ճիւղաւորուած են լինում ամեն կողմ, ինչպէս ծառի ճիւղեր, փայլում են արեկ տակ, եթէ արե է ընկնում վրէն, և ամենեին նման չեն այն ցինկի կտորին, որ կախ տուիք բաժակում: Եւ իրօք, այդ արդէն ցինկ չէ, այլ արձիմ, «արձնէ ծառ»: Դա բաժանուեց լուծուածքից, նրան դուրս մղեց այն ցինկը, որ այժմ արձնի փոխարէն միացաւ քացախաթթւուտի հետ: Մեր բաժակում այժմ արդէն ոչթէ քացախաթթու արձիմ է, այլ քացախաթթու ցինկ:

Այժմ էլ փորձեցէք պղինձը հանել երկաթով: Գտէք մի քիչ «պղնձի արջասապ»: Դա— պինդ թա-

փանցիկ մի նիւթ է կապոյտ գոյնի: Նրանում պղինձը միացած է ծծմբաթթւուտի հետ (արջասպի իւղ): Նա թէպէտև չի երեսում, բայց կայ մէջը: Պատրաստենք պղնձի արջասպի թունդ լուծուածք ջրի մէջ և մէջը երկու-երեք բոպէ ցած թողնենք լաւ մաքրած դանակի ծայր: Հէնց որ դանակը հանէք՝ կտեսնէք, որ կարմրել է, կարծէք թէ պղնձից լինի շենուած: Ծայրը ծածկուել է պղնձէ շերտով, որին պղնձէ արջասպից դուրս է մղել երկաթը:

Այս եղանակով դուք կարող էք դուրս հանել ամբողջ պղինձը և նրան փոխարինել երկաթով. պղնձէ արջասպի լուծուածքի մէջ դրէք մի քանի փոքր մեխ և թողէք մնայ այդպէս: Մէկ կամ երկու օրից յետոյ լուծուածքի գոյնը կփոխուի. կապոյտ գոյնը կդառնայ կանաչ, կապոյտ պղնձէ արջասպի փոխարէն կունենաք երկաթի կանաչ լուծուածք: Ամբողջ պղինձը բաժակի տակը կլինի հաւաքուած. մեխերի վրայ կլինի նստած, որոնցից կարող էք ժողովել բաւական շատ պղնձէ կեղեներ:

Այս եղանակով երբեմն պղինձ են հանում հանքերից, որոնց մէջ նա գտնւում է ուրիշ մարմինների հետ միացած: Սկզբում լուծում են հեղուկ ծծմբաթթւուտի մէջ: Ծծմբաթթւուտը քայքայում է հանքը և միանում պղնձի հետ: Կազմւում է պղնձի արջասպի լուծուածք, որից հանում են մաքուր պղինձ երկաթի կտորներով:

XXI. Հանքերը, հանքերից մետաղ ստանալը:

Հանքերից գործարաններում հանում են զանագան մետաղներ: Կան երկաթէ հանքեր, պղնձէ, ցինկի, արծճի և շատ ուրիշ հանքեր: Երկաթէ հանքերից տեղ տեղ ամբողջ սարեր կան: Յատկապէս շատ են Ուրալում: Այնտեղ վաղ ժամանակից գոյութիւն ունին հարիւրաւոր երկաթէ գործարաններ: Նրանցում մշակում են հանքը. սրանից հանում են «չուգուն» և երկաթ, որը արտահանւում է ամբողջ Ուրալի: Գործարանների շուրջը, խուլ անտառի և լեռների միջում, աճում են գիւղեր, որոնց բոլոր բնակիչները, մեծից մինչև փոքր, աշխատում են գործարաններում: Գործարանները կերակրում են նրանց, բռնակչութիւնն աճում է, գիւղերը փոխուում են մեծ աւանների, իսկ աւանները՝ հարուստ առևտրական քաղաքների:

Երկաթի գործարաններում աշխատանքը չի դադարում ոչ ամառ, ոչ ձմեռ: Գիշեր-ցերեկ վառուած են ահագին հնոցներ, որոնք աւելի շուտ աշտարակների նման են: Նրանց մէջ հալւում է հանքը, և փոխարկւում չուգունի: Շոգեշարժ մեքենաների աղմուկն ու գորգոռոցը, բանուորների շոցներն ու գոռում-գոչումը—այս բոլորը միախառնւում են և մի անկարգ թնդիւն ձեացնում, որը չի դադարում վաղ առաւտից մինչև ուշ գիշեր:

Եթէ երկաթէ հանքը, ինչպէս Ուրալում, բաղկացած է երկաթի զանազան թթուածներից, այն ժա-

մանակ նրա մշակելը շատ հասարակ բան է։ Մեծ հնոցի մէջ վերևից լցնում են ածուխ, կամ չոր փայտ, յետոյ հանքի կտորտանք, նորից ածուխ, նորից հանք և այսպէս շարունակ, մինչև ամբողջ հընոցը բերնէ բերան կլցուի ածուխի և մէջէ մէջ հանքի շերտերով։ Այնուհետև վառում են ածուխի ներքեկի շերտը և ուժեղ կերպով փշում առանձին մեքենաներով։ Ածուխը զարհուրելի կերպով շիկանում է, այրում և միանում ոչ միայն օդի թթուածնի հետ, այլև հէնց իրա՛ հանքի թթուածնի հետ։ Երկաթի թթուածը իր թթուածինը տալով ածուխին, փոխարկում է մաքուր երկաթի։ Սա հալում է ահագին հնոցի զարհուրեկի տաքութիւնից և իր մէջ լուծելով ածուխի մի մասը, փոխարկում է չուգունի։ Չուգունը շնորհիւ իր ծանրութեան, հոսում է ներքեւ և փոքրառփոքը նետում հնոցի յատակում։ Հալուած չուգունը ժամանակ առ ժամանակ բաց են թողնում հնոցից, իսկ վերևից աւելացնում միշտ նոր ու նոր հանքեր և թարմ ածուխ։ Աշխատանքը անդադրում շարունակում է, որովհետև ամեն մէկ ընդհատումից յետոյ հարկ կիխնէր նորից շիկացնել հնոցը և այս բանի վրայ աւելորդ ժամանակ և աւելորդ վատելիք ծախսել։

Տեսնում էք ուրեմն, որ շիկացած ածուխը կարող է թթուածին խել երկաթէ հանքից։ Նա ներգործում է նման կերպով և ուրիշ շատ մետաղների միաւորութիւնների վրայ, և ածուխի այս յատկութիւնից սովորաբար օգտագում են գործարաններում

մետաղներ ստանալու ժամանակ։ Մի քանի մետաղների համար պահանջում է ածուխը աւելի ուժեղ շիկացնել, ուրիշների համար աւելի թոյլ, բայց ամենուրեք շիկացած ածուխը ագահութեամբ միանում է թթուածնի հետ և դուրս է մղում մետաղները։

Շատ բարդ հանքերի մետաղների մեծ մասում, օրինակ, ձեզ արդէն ծանօթ դաշտի որձաքարի մէջ, մի հետաքրքրական մետաղ կայ, որ կոչւումէ կալի։ Կալին աւելի հեշտ է միանում թթուածնի հետ, քան ածուխը։ Օրինակ, եթէ մի կտոր կտալի գցենք ջրի մէջ, նա կլուծի ջուրը։ Նրանցից խլում է թթուածինը, և ջրից դուրս է գալիս մի ուրիշ գազ, որ առաջ միացած էր թթուածնի հետ։ Կալին թթուածին է խլում խիստ շատ թթուածներից, բայց ինքն էլ, երբ շիկանում է, նոյնը տալիս է ածուխին։

Կալին—ամենափափուկ մետաղներից մէկն է։ Նա հեշտ կտրում է դանակով և մինչև անգամ կտրելի է տրորել մեղրամումի պէս։ Իր գոյնով և փայլով նա յիշեցնում է մաքուր արծաթը։ Օդի մէջ արագ պղտորուում է, որովհետև ինքն իրան միանում է թթուածնի հետ, և նրա մակերևոյթը շուտով ծածկում կալիի սպիտակ թթուածի շերտով։

Քիչ մետաղներ են այնպէս բուռն կերպով միանում թթուածնի հետ, ինչպէս կալին։ Այդպիսի մետաղներ մանում են ամենաօգործական հանքերի բաղադրութեան մէջ, բայց նրանց դժուար է այնտեղից հանել և դժուար է պահպանել մետաղէ տեսքով։

Արա համար էլ բոլորովին պէտք չեն այն գործադրութեան համար, որի համար ծառայում են մեզ այդպիսի մետաղները, ինչպէս օր պղինձը, երկաթը, արծիճը, անագը, արծաթը, ոսկին և ուրիշները:

XXII Ոսկի

Բոլոր մետաղներից ամենահաստատունը՝ ոսկին է: Նա երբէք չի փոխում ոչ օգում, ոչ ջրում, ոչ էլ խոնաւ հողում: Եթէ այսքան թանգ չլինէր, նրանից կշինէին բազմաթիւ զանազան իրեր, որ այժմ շինում են երկաթից և պղնձից: Ոսկին ձեռք են բերում զանազան հանքերի միջից, բայց ոչ թէ իրեն հանք, այլ իրեւ մաքուր մետաղէ ոսկու մանրիկ հատիկներ: Ոսկուն չեն մօտեցել նիւթերի այն փոխակերպութիւնները, որոնք տեղի են ունեցել մեր մոլորակի վրայ դարերի ընթացքում: Նա մնացել է ազատ և թթուացման չէ ենթարկուել. նա չի միաւորուել ուրիշ պարզ մարմինների հետ, պահպանուել է հողի մէջ այն միենոյն ձեռփ, ինչպէս որ սառել է դեռ երկրիս կեղեկի կազմակերպութեան ժամանակ: Ժամանակի ընթացքում հանքերն իրանք կարող էին ջրից քայքայուել: Կարող էին փշրուել, փոխուել խիճի, աւազի, կաւի, բայց ոսկէ հատիկները անփոփոխ մնացին: Սըընթաց գետակները սարերը հեղեղելով քշեցին տարան նըանց խիճի ու աւազի հետ ուրիշ տեղ, գետերի հովիտները: Այնտեղ նրանք նո-

րից մնացին այնպէս պարզ ու փայլուն, ինչպէս որ էին հողի ներսը: Այժմ նրանց գտնում են գետերի շեղակոյտերի մէջ լեռներից հոսող շատ գետերի հովիտներում: Մարդիկ նորից մաքրում են ոսկէ այդ հատիկները աւազից և ուրիշ հանքերից:

Այն շեղակոյտերը, որոնցում ոսկի է գտնւում, կոչւում են ոսկէ աւազ, իսկ այն տեղը, ուր նա ձեռք է բերւում—ոսկէ հանք: Ոսկու աւազ շատ կայ Սիբիրում: Ուռւաց ամբողջ ոսկին Սիբիրից է գալիս: Ոսկի հանելու համար այնտեղ ամեն կողմերից գնում են մարդիկ: Նրանք գնում են վայրի, դաժան անտառով ծածկուած լեռներ. մէկ լեռնային գետից անցնում են միւսի հովիտը, փորփրում են գետի շեղակոյտերը և նրանցում ոսկի որոնում: Հէնց որ գտնում են, այն հովիտը, ուր առաջ միայն վայրենի գաղաններ էին թափառում և ուր մարդկային ձայն չէր լսւում, կարծես թէ զարթնում է երկարատև քնից:

Եթէ շեղակոյտը հարուստ է, ոսկին գրաւում է դէպի ինքը այն մարդկանց, որոնք հեշտ կերպով փող աշխատելու ետևից են ընկած, իսկ նրանց ետևից գնում են հարիւրաւոր բանուորներ: Ինչպէս երկաթի գործարանների շուրջը, այնպէս էլ այստեղ, առաջ ոչ ոքին ծանօթ չեղած գետակի ափին, գիւղեր են գցւում: Անտառը կտրում են, շտապով խրճիթներ շինում, «մաքրող» մեքենաներ կառուցւում հողից ոսկին զատելու համար: Այստեղ-այնտեղ հորեր են փորում, անց են կացնում բազմաթիւ անցքեր: Ոս-

կի գտնուած տեղերը հետզհետէ ընդարձակ ծաւալ
են ստանում, և գետակների ափերը արագ փոխում
են և ընդունում մի առանձին, անձոռնի կերպա-
րանք։ Ամբողջ գետինը ափի մօտ փորփրած, շրջա-
կայ անտառը այրուած և կտրտած, ամեն կողմ
թափթփած ոսկու շեղջակոյտերից դուրս հանած քա-
րեր, գետակի ջուրը, որ առաջ այնպէս թափանցիկ
էր, դառնում է դեղին, պղտոր՝ ցեխից, կաւից և
մանր աւազից, որոնք մտնում են ոսկու հանատե-
ղերից գետի մէջ։

Ոյստեղ, ինչպէս և միշտ, հարստութեան ետե-
լից ընկած, մարդիկ մոռանում են երկրի գեղեցկու-
թիւնը, մոռանում են, որ երկիրը, որը մեզ սնունդ
է տալիս ու հարստութիւն, իր գեղեցիկ տեսքով շո-
յում է ու հանգստացնում մեր հոգին։ Այն մարդու
համար, որ երկար հիւանդութիւնից յետոյ վեր է
կենում անկողնից, աւելի մեծ բաւականութիւն չկայ,
քան հրճուել շրջակայ աշխարհով։

Ես կարծում եմ, որ ձեզ էլ դուք է գալիս այս
աշխարհը, որ դուք սիրում էք երկրի գեղեցկութիւ-
նը, նրա կապտառ լեռները, կանաչ հովիտները, ար-
ծաթէ գետերը և կապոյտ ծովը, և կարծում եմ, որ
երկար պատմութիւններ լսելուց յետոյ երկրի մա-
սին դուք պակաս չեք սիրի ձեզ շրջապատող բնու-
թիւնը, և միենոյն ժամանակ կսիրեք նրան աւելի
գիտակցաբար, քան առաջ։

of which, including the dorsal, dorsally, however,
is continued by a small spine before either of them.
The remainder of the ventral is divided into two
parts, the first being with four spines, each
being situated symmetrically, the second, which
is much the larger, also being divided into
two, situated one on each side of the middle, the
latter, however, being divided into two, each
being situated at the middle, upper, middle, lower

" " The dorsal, pectoral, and pelvic appendages
are slightly, though distinctly, divided into three, the pectoral
and pelvic, situated close to, or opposite, one another,
the former on the anterior side, the pectoral being
situated in the anterior part of the body, the pelvic
being on the posterior side, the latter being situated
in the posterior part of the body.

The dorsal, pectoral, and pelvic appendages
are slightly, though distinctly, divided into three,
the pectoral and pelvic, situated close to, or opposite,
the former on the anterior side, the pectoral being
situated in the anterior part of the body, the pelvic
being on the posterior side, the latter being situated

«Ազգային գրադարան



NL0254618

Ա Շ Խ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Բ Ր Հ

Քացի հայ եւ ոռս մամովի մէջ հրատարակուած քազմաթիւ
յօդուածներից, որոնք լոյս կտևնեն առանձին հատորով

Առանձին գրեթեով պարուած

1. Քառզիրք լատիներեն եւ օսարազի դարձուածների.
լատիներէն լեզուի քերականութիւնով 75 կ.
2. Անգլիայի բաղաբակրութեան պատմութիւնը
Հ. Բոկլի (թարգմ.) 75 կ.
3. Յովհ. Յովհաննիսեան և նրա քննադատները . . . 5 կ.
4. Օդ. պրօֆ. Վագնէրի, պատկերազարդ. (թարգմ.) . 20 կ.
5. Երկնային լուսաւորներ. պրօֆ. Վագնէրի, պատկերա-
զարդած թարգմանչից 20 կ.
6. Երկիր. պրօֆ. Վագնէրի, պատկ. (թարգմ) 25 կ.

անժիպ

7. Ռուս-հայ բնդարձակ բառարան.
8. Գեօրգաֆիյ Կավկազ չ. I.
9. Ա. Մակուշին. Առողջապահութեան դասընթաց. միջնա-
կարգ դպրոցների համար. թարգմ. մասնագիտական
բառարանով, ծանօթութիւններով և բազմաթիւ պատ-
կերներով. ճոխացրած (400 երես.).
10. Պրօֆ. Մ. Բոգդանով. Պատկերներ ոռս բնութիւնից. բնա-
գիտական նկարագրիքներ և պատմուածքներ, հայացրած
և բազմաթիւ ծանօթութիւններով ու պատկերներով
ճոխացրած.
11. Պատկերազարդ բուաբանութիւն մանկական պարտէզների
համար
12. Բուսաբանական բառարան
13. Մանր երկիր
14. Պր. Վագնէր Զուր
15. ք Կրակ եւ լոյս (մամուլի տակ)
16. ք Կենդանիներ
17. ք Անտեսանելի հակներ
18. ք Ինչպէս է կազմուած եւ գոր-
ծում մեր մարմինը